

Հրեաներուն ազատագրութեան, եւ 1850ին՝ Յոնիական կղզիները Յունաստանի տալու գործին մասնակից:

1850-51ի ձմեռն էր որ իբր մարդասեր յայտնուեցաւ Անգլիոյ ու ամբողջ աշխարհի, իբր անսահման ուժ մը՝ ի սպաս ամէնէն գեղեցիկ գատերուն: Իր մէկ հիւանդ զակին ընկերացած էր Նաբոլի, որ ան ատեն կը գտնուէր Պուրպանեան զգուելի ցեղէն Պոմպա թագաւորին տակ: Անտարբեր հանդիսատես չէր կրնար մնալ այդ անարդ բոնաւորին վարչութեանը, ու անոր գործած ոճիրներուն: Դարձին, տետրակ մը գրեց, հրատա խօսքերով նկարագրելով ինչ որ տեսած էր, մասնաւորապէս այն խփոժութիւնները որոնց ենթարկուած էին քսան հազար քաղաքական բանասարկեալ: Խաւարին դոններն էր որ կը բանար՝ քաղաքակիրթ աշխարհին զահանգեալ աչքերուն առջեւ: Տետրակը, սրուն հետեւեցաւ ուրիշ մըն ալ, գայրոյթի սարսուռ մը առաջ բերաւ ամբողջ Եւրոպայի մէջ: Լորտ Բալմլէսդըն Երեսփոխանական ժողովին մէջ անոր մասին խօսեցաւ շերմ գովեստներով, եւ, ընդհանուր ծափահարութեանց մէջ տեղ, իմացուց թէ անկից օրինակներ զրկած էր օտար երկիրներու մէջ Անգլիոյ բոլոր ներկայացուցիչներուն, հրահանգ տալով որ իրենց գտնուած երկրին կառավարութեան ներկայացուցիչներն չեն: Կարելի է ըսել թէ իտալական յեղափոխութեան ու իտալիոյ միութեան թուականը՝ ասակից կը սկսի: Չի կայ իտալացի մը որ, Կլաստոյնը՝ Գալօրի հաւասար՝ իտալական միութեան ամէնէն ուժով գործիչը չնկատէ: 1874ին, երբոր Կլաստոյնը նախարարապետութեանէն ինկաւ, կարդինալ մը Հոսի մէջ կ'ըսէր անգլիացի ուղեւորի մը. «Շատ ուրախ ենք Պ. Կլաստոյնին անկումէն: Գալօրի հաւասար, իտալական թագաւորութեան հիմնադիրն է ինքը: Իր տետրակը, ուրիշ ու է պատճառէ աւելի, քանից Երկու Սիկիլիաներուն թագաւորութիւնը, եւ բացաւ յեղափոխութեան դոնները որ Պապը զրկեց իր աշխարհական իշխանութենէն:» Իսկ իտալացի հայրենասեր մը կ'ըսէր նոյն այդ ճամբորդին. «Պ. Կլաստոյնի անկումը խորին ցաւ կը պատճառէ մեզի. Գալօրի չափ, իրեն պարտական ենք իտալիոյ ազատութիւնը:»

1858ին, կը ներկայացնէր իր առաջարկը ի նպատակ ուսմանական երկու իշխանապետութեանց (Մոլտաւիա եւ Վալաքիա) միացման ու Ռումանիոյ կազմութեան: Լորտ Բալմլէսդըն և Տիգրակի (վերջէն լորտ Պիքընսֆիլտ) ձեռք ձեռքի՝ հակառակեցան իրեն, պատճառաբանելով թէ միացեալ Ռումանիա մը անխուսափելի կերպով ուսական նահանգ մը պիտի ըլլար: «Եթէ բռնապետութեան դէմ պատնէշ կ'ուզէք, պատասխանեց Կլաստոյնը, ազատ մարդերու կուրծքին պէս պատնէշ չի կա՛յ:»

1868ին, նախարարապետ կը գտնենք զինքը առաջին անգամ ըլլալով, մինչեւ 1874: Այս վերջին թուականին էր որ պահ մը քաշուեցաւ խորհրդարանէն եւ դարձաւ իր սուսնասիրութեանց: Բայց քիչ յետոյ նորէն հանրային կեանքին դարձաւ ամէն ժամանակէ աւելի եռանդով, ի նպատակ Պուլկարներուն: Երբունի քաղաքացիաբար նոր կեանք մը սկսաւ իր մեծ խաչակրութեամբը ընդ-

դէմ թիւրքերուն: Պուլկարական խփոժութիւններուն ու մանաւանդ Պաթաքի տիրահաչակ շարքերուն լուրերը կը հասնէին հետզհետէ: «Չարգերը, կ'ըսէ «Տէլի-Քրոնիքը» աղեկէզ հեղուութեամբ մը, այն տեսակ էին որ այսօր անոնց շատ քիչ կարեւորութիւն պիտի տայինք, բայց ան ատեն Անգլիոյ ժողովուրդը աւելի զիրաւ կը զրոյուէր: Այսօր 12,000 հոգիի շարքը՝ աննշան բան մը պիտի նկատուէր: Ան ատեն, ոտքի հանեց ամբողջ Անգլիան:» Աւելի ճիշդը, Կլաստոյնն ինքն էր որ ոտքի հանեց ամբողջ ժողովուրդը: Լորտ Պիքընսֆիլտ նախ հերքեց խփոժութեանց լուրերը, «խահուէի պարագ խօսքեր» անուանելով գտնուեց: Բայց շարժուել սկսած էր: Կլաստոյն վարեց զայն անլուր ուժգնութեամբ մը, անուր «վայրագութեամբ», ինչպէս կ'ըսէ «Թայմը»: 1873 սեպտեմբեր 3ին էր որ հրատարակեց իր տետրակը, «Պուլկարական արհաւիրքները եւ Արեւելեան խնդիրը», որուն մէջ կ'ըսէր. «Պէտք է մէջտեղէն վերցնենք թիւրքերուն կեղծութիւնը՝ կարելի եղած միակ միջոցովը, որ է զիրենք ալ միասին մէջտեղէն վերցնել: Իրենց Չալթիկները ու Միւսիլիները, իրենց Պինակաշիները ու Երկապաշիները, իրենց Գայմազմները ու Փաշաները, մեծով պղտիկով, տոնտիտեղով, կը յուսամ թէ պիտի կորսուին երթան նահանգէ մը զոր աւերեցին ու սրբապղծեցին:» Ասիկա գաղափար մը կուտայ տետրակին ամբողջ ողիին վրայ, թիւրքին համար իր ունեցած խորին քամահարանքին վրայ, — որովհետեւ ճշմարիտ է որ եթէ մարդ լաւ ճանչնայ թիւրքը, տետրութեանէ աւելի քամահարանք կը զգայ անոր նկատմամբ: Այսօր տարակին յաջորդ տարին հետեւեցաւ ուրիշ մը, «Դատ մը Չարգերէն», որուն մէջ նոյնպէս կը պնդուէր որ քրիստոնեայ հպատակները բռնի ուժով ազատելու է թիւրքին ձեռքէն: Գրչին՝ իր հեղինակաւոր ու հրահրող խօսքը միացուցած էր արդէն: 1873 սեպտեմբեր 9ին էր որ Պլաքէթիճ բացթողաց միդիկի մը մէջ խօսեցաւ, ու հարիւրաւոր միդիկիներու մէջ սկսաւ քաղքէ քաղք պատցնել իր հրաշունչ պերճախօսութիւնը ի նպատակ Պուլկարներուն: Անգլիոյ պատմութեան — ու ամբողջ պատմութեան ալ — մէջ առաջին անգամ էր որ մարդ մը, որ նախարարապետ եղած էր, այսպէս ասպարէզ կ'իջնէր՝ երկիրը իրար անցընելու ու տակնուվրայ ընելու:

Հետեւանքը յայտնի է. Կլաստոյնի շնորհիւ է որ Անգլիա ու անոր հետ Եւրոպա թողուցին Ռուսիոյ յառաջանալ թիւրքիոյ վրայ եւ ջախջախել զայն: Պուլկարիան ազատած էր:

1880ի ընտրութիւններուն, ազատականներն էին որ կը յաղթէին, ու Կլաստոյնը երկրորդ անգամ էր որ նախարարապետ կ'ըլլար: Պաշտօնի վրա անցնելուն պէս առաջին գործը եղաւ՝ անպիական նաւատորմիւր Տուլինեօ զրկելով՝ բռնադատել թիւրքիան որ թեսալիան Յունաստանի թողու, Պերլինի զաշնագրին համաձայն: Ինքն էր նոյնպէս որ Մոնթէնէկոյի հողային պահանջուեցները կարգադրեց, ու միանգամայն ձեռնարկեց Պերլինի Դաշնագրին 61րդ յօդուածին գործարարութիւնը ապահովել տալով: Կ. Պոլսոյ վեց պետականներուն 1880 յունիս 11ի զեկու-

ցումը եւ սեպտեմբեր 7ի հաւաքական ծանուցադիրը կլա-
տըսողնի նախաձեռնութեամբ սկսուած գործունէութեան
արգասիքն են: Բայց Յունաստանի ու Մանգէնէկոյի խըն-
դիրներուն բռնի կարգադրութիւնը՝ Պերլինի դաշնագիրը
ստորագրող պետութեանց յօժարակամութիւնը սպառած
էր, ու Անգլիա, միայնակ մնացած հայկական հարցին մէջ,
չկրցաւ աւելի առաջ երթալ:

Իր նախարարութիւնը ինկաւ 1885ին, բայց ընտրու-
թիւնները դարձեալ ազատականները բերին իշխանութեան
զուլի, ու կլատսպոն երրորդ անգամ նախարարապետու-
թեան կը կոչուէր 1886 փետրուար 1ին: Եթեմանաս-ւանը
վեց տարեկան էր ան ատեն, ու ասկից կը սկսի իր կեան-
քին մեծագոյն շրջանը: Յանկարծ, Ժողովին ներկայա-
ցուց իրլանտայի ինքնօրինութեան Օրինագիծը, իբր մի-
ակ դարման քոյր-կզգիին տառապանքներուն: Շատերը
անոնցմէ որ մինչեւ ան ատեն պատիւ համարած էին իր
քովն ի վեր կուուիլ, առաջին օրէն իսկ բաժնուեցան իր-
մէ. բայց ինք իր դատէն բաժնուող մարդ չէր, ու այդ
ձերունիին մինաւորութեանը մէջ անասելի մեծութիւն մը
կար որ հակառակորդները իսկ ակնածանքով կը լեցնէր:
Օրինագիծը երկրորդ ընթերցման մէջ մերժուեցաւ 1887
յունիս 6ին՝ 30 ձայնի մեծամասնութեամբ: կլատսպոն
լուծել առեւ խորհրդարանը, եւ որ ընտրութիւններ սկսան.
բայց երբ քուէարկութիւնը փակուեցաւ, 112 ձայնի մե-
ծամասնութիւն մը կար ընդդէմ իրլանտական Օրինագիծին
ու կլատսպոնի որ հրաժարեցաւ:

Ա՛լ ամբողջովին իրլանտայի գատին նուիրեց ինքզին-
քը, խօսքով ու գրչով, խորհրդարանին մէջ ու միզինկնե-
րու մէջ, պարտուած բայց միշտ կանգուն: Իր գատին ար-
դարութեանը համոզուած էր, ու աս կը բաւէր իրեն: Իր
մարմնական ու մտաւորական գործունէութեան թափը,
իր ճիգերուն անհուն ու անզուլ խանդը, իր կեանքին ո եւ
շրջանին մէջ՝ արդէն զինքը սո յաւետ նշանաւոր ընծա-
յելու պիտի բաւէին. բայց այդ աննման կոխը՝ ութսուն
տարեկան ձերունիի մը կողմէ, հրաշքի պէս բան մըն էր
որուն ամբողջ Անգլիա ու մարդկութիւնը կը հետեւէին ըզ-
մայլած ու պատկառու: «Իս քաղաքական կեանքին կապող
միակ բանը, կ'ըսէր, իրլանտայի արգար գատն է. ու իս
ո՛չ միայն քաղաքական, այլ ֆիզիքական կեանքին կապող
միակ բանն է ասիկա:» Իրա՛ւ ալ, կարծես ա՛լ անոր հա-
մար, անո՛վ միայն կ'ապրէր: Իր ջանքերը յաջողութեամբ
պատկուեցան 1892ի ընտրութեանց մէջ, որոնք 40 ձայ-
նի մեծամասնութիւն մը տուին իրեն: Չորրորդ անգամ
ըլլալով կառավարութեան զուլը անցաւ, 1893 փետր-
ուար 14ին կրկին անգամ ներկայացուց իրլանտական Օ-
րինագիծը, եւ հոսմերան կռիւ մը ետքը որ ութսուն օր
տևեց, Օրինագիծը ընդունուեցաւ 34 ձայնի մեծամաս-
նութեամբ: Օրէնքի կարգ անցնելու համար կը մնար մի-
այն որ Լորտերու ժողովէն ալ ընդունուէր. ու Լորտերը,
մէկ քունի օրուան միճաբանութենէ յետոյ, մերժեցին զայն:

Այս անգամ պայքարը սկսաւ Լորտերուն դէմ: Բայց
84 տարեկան էր, աչքի տկարութենէ մը արդէն կը տառա-
պէր: Ու թէպէտ կը բաղձար խորհրդարանը լուծել ու նո-
րէն առպարէզ իջնելով՝ ուղղակի երկրին կոչում ընել,
բայց նախարարութեան միւս անդամները ընդդիմացան:
1895 մարտ 3 ին նախարարապետութենէ հրաժարեցաւ
իր անզը թողլով լորտ Բողգլերի, հանրային կեանքէն ալ
քաշուելով միանգամայն, ու առանձնացաւ իր սիրական

հանգստարանը, Հարտըն, առանց իր կեանքին վերջին
տարիներուն մեծ երազին իրակացումը տեսնելու:

Մեզի համար միայն նորէն ասպարէզ իջաւ: Սասունի
Չարդին լուրերը 94ի վերջերը արդէն Եւրոպա կը հասնե-
ին, ու կը սկսէին խղճերը խռովել: կլատսպոն չէր կրնար
անտարբեր մնալ: 1895 օգոստոսին, Չէզըր հայկական
միզինկի մը մէջ, ուր ներկայ էին Ուէսզմինզըրի գուքսը
եւ Արկայլի գուքսը, խօսեցաւ մեր գատին վրայ ե փափաք
յայտնեց կուսակցական խնդիր մը չընել հայկական հար-
ցը, հապա ընդհանուր շարժումով մը՝ ոյժ տալ լորտ Սո-
լըզլերիի որ նոր պաշտօնի պուլս անցած էր: Բայց հետ-
ըզհետէ կ'անելնար իր տգոհութիւնը Անգլիոյ մեղմ քա-
ղաքականութեան դէմ: Երկու ամիս ետքը կը գրէր. «Ի-
ցի՛ւ թէ Աստուած իր ողորմութեամբը արագ վախճան մը
զրկէր իշխող թիւրքին ու անոր բոլոր արարքներուն. այդ-
պէս կ'ըսէի երբ կրնայի ըսել, ու նոյն իսկ երբեմն այդպէս
ալ ըրի, ու այդպէս ալ կ'ըսեմ իմ քաղաքական գառա-
մութեանս ու մահուանս մէջ:» Քիչ վերջը, իր ծննդեան
85րդ տարեկարձին առթիւ, 1895 դեկտեմբեր 29 ին,
Հարտըն ընդունելով Անգլիոյ եւ Ֆրանսայի Հայերու կող-
մէ պատգամաւորութիւն մը, կրակոտ ատենաբանութեան
մը մէջ՝ սուլթանին կառավարութիւնը կ'որակէր իբր «ա-
մօթ մը քաղաքակրթութեան եւ անէճը մը մարդկու-
թեան:» Իր զայրոյթը ա՛լ անսահման էր իր երկրին ու
ամբողջ Եւրոպոյի քաղաքականութեանը դէմ, ու 1896
սեպտեմբերին, Լիւրբալի հայկական միզինկին մէջ, ե-
րեք քառորդ ժամ խօսեցաւ մեզի ի նպաստ, անձեցուն
մոլեգնութեամբ: Իր բաղձանքն էր որ Անգլիա, միայնակ,
ամէն խոչընդոտ արհամարհելով ու վտանգ աչք աննելով,
զորձեր թիւրքին դէմ եւ Հայաստանի տառապանքներուն
վերջ տար ի՛ր ձեռքովը: Ազատականներէն իսկ շատեր,
որ կը կարծէին թէ ատիկա ընդհանուր պատերազմ առաջ
պիտի բերէր, ա՛լ իր հետը չէին, ու լորտ Բողգլերի հրա-
ժարեցաւ ազատական կուսակցութեան առաջնորդութենէն:
Բայց կլատսպոն, իր վերջին տարիներուն, ա՛լ կուսակցու-
թեան մը մարդը չէր. մեծ մարդասէրն էր որուն սիրտը
կ'արիւնէր ի տես ամէնէն ահաւելի աղէտքներուն որ երբեք
հարուածած ըլլան ցեղ մը. իրեն համար արիւնլուայ Հա-
յաստանը կար, ու Անգլիան որ՝ եթէ համարձակէր՝ կրնար
այդ երկրին ապահովել իր արգար պահանջումներուն վա-
յելումը: Ու ինք օգն մարդն էր որ գիտէր համարձակիլ,
երբ արգար էր գատը:

Ու իր գատը միշտ արգար եղած է: Իր փառքի մե-
ծագոյն տիրոջը պիտի մնայ ասիկա:

Իր վերջին մտածումը զրկեալներուն համար եղաւ,
ու թերեւս մեզի համար — մենք, էն մեծ զրկեալները:
Մահուրէն հինգ օր առաջ, շաբաթ իրիկուն, իմանալով
որ իր փեսան, որ քարոզիչ մըն է, հետեւեալ առտու կա-
նուխ եկեղեցի պիտի երթար, ըսաւ անոր.

— Աղօթեցէք ինձի համար, ու բոլոր քրիստոնեանե-
րուն համար, ու բոլոր մարդկային արարածներուն համար:

Ու, գաղարէ մը ետք,

— Մի՛ մոռնաք հարստահարեալները, զժբաղձները,
ոտնակոխները:

Ուէսզմինսպըրի արբայարանը, ուր հիմա կը հանգչի
ինքը, ա՛լ ուխտատեղի մըն է մեզի համար:

Լ. ՉԱՐԹՈՒՄԵԱՆ

ԻՆՉՈՒԻ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ

«Կապոյտ Գրքը» էն «Նոր Կեանք» ի և «Մարտ» ի մէջ հրատարակուած քաղուածքները հայ ազգին համար ուշադրաւ են բազմաթիւ տեսակէտքերով: Համր է միշտ յիշեցնել թէ օտարին հետ մեր յարաբերութիւններուն մէջ հայ ազգն է որ միայն նկատողութեան կ'առնուի: Պահպանողականութիւն եւ ազատականութիւն, յեղափոխական ոտորաբաժանումներ, կուսակցութիւններ որ կ'ընթացան սակցութիւններ կ'աներեւութանան, կամ թէ ամենքը իրարու ձուլուելով կը կազմեն ամբողջութիւն մը որ կը պատկերացնէ Հայութիւնը:

Այն պահուն երբ Եւրոպայի մատանջութիւնը Եւրոպայի—Արեւելի վրայ կեդրոնացած կ'երեւնար, յանկարծ Հայաստանի գործերու վերաբերեալ հաստիկէ պաշտօնագրքի մը հրատարակութիւնը ենթադրել կուտայ թէ մեր Արեւելն ալ միշտ իր պահեստի տեղը ունի գիւտնագիտութեան հաշիւներուն մէջ: Ընդունելու ենք թէ այդ հրատարակութեան գոնէ Վասպուրականի վերաբերեալ մասը Եւրոպայի առջև հայ ազգին ծառայութիւն մատուցանելու վիճակուած չէ. մինչև իսկ կրնանք մտքէ անցընել թէ Անգլիոյ կառավարութիւնը թիւրքիոյ հետ աւելի բարեկամական յարաբերութիւններ մշակելու տրամադիր ըլլալով դուցէ, կ'ուզէ հանրային կարծիքը թիւրքիոյ եթէ ոչ նպաստաւոր դարձնել, գոնէ չէղբացնել: Կարգ մը պաշտօնագրքեր կրնան վերաբերել այս նպատակին ժամանուած:

Այդ պաշտօնագրքերուն ընթերցումը այն տպաւորութիւնը կը թողու թէ վան ու շրջակաները Յեղափոխութիւնը երկրին տառապանքներուն անխուսափելի հետեւանքը չէ: Բռնազբօսիկ միջոցներով ստեղծուած խառնաշփոթ կացութիւն մը չի կրնար Ազգային Ապստամբութիւն համարուիլ: Տեղացի հայ փոշուրդը ինքնին հանգարապիտի մնար, ուստի եւ այս երկու տարուան դառնադառն աղէտները պիտի չի ծանրանային իր վրայ առանց դրօշն եկուոր դրօշններու որոնք երկիրը տակնուվրայ ընկու հետամնացան:

Այս տեղեկութիւնները կրնան հիմնաւոր ըլլալ կամ ոչ, խնդիրը հոգ չէ. մեզի համար կարեւորը այն է թէ Անգլիան իր հիւպատոսներուն կը հաւտայ. ու Անգլիոյ հետ Եւրոպա ու Ամերիկա ստուգապատում կը համարին հայկական դատին բարեկամ կառավարութիւնն է մը բղխած տեղեկութիւնները: Բնականաբար թիւրքիոյ իշխանութեան տեսութիւններուն շատ ձեւնաւոր է Անգլիոյ ու ամբողջ Եւրոպայի շարժումը կրած այս տպաւորութիւնը:

Այս տպաւորութիւնը շատ աւելի խորապէս ազդեցիկ է ծրը հիւպատոսները հայ «յեղափոխականներուն» իբր հակադրութիւն կը ներկայացնեն Վասպուրականի թիւրք պաշտօնատարները: Մինչ առաջինները իբր զազրելի տիպարներ կը նկարուին, մարդիկ «որոնք իրենց անձնական օգտին համար կ'օգորին ու բնաւ հոգեբնին չեն ընել ի

րենց սիրտով հայրենակիցներուն տառապանքները», անպիսի թիւրք կուսակալը խելացի եւ մարդասէր տիպար մը դուրս կուգայ հիւպատոսական գրչին տակ. «Կիսակալը «կրցածը բրաւ Գիրտներուն ու թիւրքերուն հասկցնելու «թէ ինչ անգլութիւնն ու անքաղաքագիտութիւնն պիտի ըլլայ ատ մարդոց (եկուոր դրօշներուն) յիմարութիւնը «քաւել տալ իրենց անվնաս հայրենակիցներուն»: Հիւպատոսական այս տեղեկութիւնները կարելի է շիտակ ըլլան. դեռ վերջերս չհրատարակուեցաւ թէ Հայրիկ—կաթաղիկուոր մասին մը ընծայած է Պայագիտի թիւրք կառավարչին, որովհետեւ Հայերուն պաշտպան հանդիսադած է: Եւրոպայի մէջ երկու տարի առաջ հրատարակուած գովիտներ չկարդացուեցան Մուշի կառավարչին որ պաշտօնանկ եղած էր ընդհանուր կոտորածին ատեն Հայերը ջարդելու թողտուութիւն զրացած ըլլալուն: Երկրին օգուտը հասկցող, խելացի ու մարդասէր իսլամ պաշտօնեաներ ալ կրնան գտնուիլ, ու վանի 1896 ի կուսակալն ալ ասոնց կարգէն կրնայ ըլլալ. բայց ընդունինք որ «Կապոյտ Գրքին» մէջ հայ յեղափոխականին ու թիւրք պաշտօնէին այս հակադրութիւնը անշուշտ հայկական դատին ծառայութիւն մատուցանելու նպատակաւ չէ որ շեշտուեր է: Ու երբ որ մը արիւնի մէջ լողայ Վասպուրական, անգլիական հիւպատոսը պիտի յիշեցնէ թէ ինք արդէն տեղեկագրած էր. «Եթէ ո եւ է խոսովութիւն ծագի կը յուսամ որ «պիտի սահմանափակուի, սակայն միշտ սրիկայ տարր «մը կայ որ կոտորուելու ու խոսովութիւն հանելու ասով «մը կը սպասէ»: Եւ մեզի պիտի հասկցնեն թէ ջանացէք այդ ատիթը սրիկաներուն չհայթայթել, ինչ կրնանք ընել:

Որքան շատ ուշադիր ըլլանք «Կապոյտ Գրքին» վասպուրականի վերաբերեալ տեղեկութիւններուն այնքան աւելի կը համոզուինք թէ ինչ որ ալ պատահին այդ կողմերը չենք կրնան յուսադիր մնալ Անգլիոյ բարեացակամութեանը վրայ: Իր ուժը մինչև Արարատի ստորոտը հասցնելու անգորութիւնը զգալով, Մեծն—Բրիտանիա գործին մէջէն կ'ելլէ չքմեղացնելով թիւրք իշխանութիւնը: Ու այս ճարպիկութիւնն ալ շատ կը դիւրանայ երբ դրօշն եկուոր դրօշները հայկական շահերուն հակադրող ամէն հանգամանքները կը ստեղծեն:

Հարկ չենք անենք երկարօրէն խօսիլ Ռուսիոյ կողմէն մեզի համար ո՛ր եւ է տիրակալութեան մը հաւանականութեան վրայ. Վասպուրականի աղէտները նպաստաւոր են Ռուսիոյ փրագիւրներուն որոնք մեզի նպաստաւոր չեն: Որքան աւելի շարժարուի Հայաստան, ջարդերու ինչքան աւելի կրկէս դառնայ մեր աշխարհը, այնքան աւելի Ռուսիա կը յառաջանայ գլխի նպատակը: Եթէ անգամ մը մտքերնիս բերենք թէ Անգլիոյ հանրային կարծիքը 1895 էն ասպիսի ինչ մեծ փոփոխութիւն կրցց կ. Պոլիսը Ռուսներուն ձգելու գաղափարին ի նպաստ, պիտի ըմբռնենք թէ իշխան Լոպանով հայկական կոտորածները թողարեւելով ու քաշալերելով սքանչելապէս կը ծառայէր Ռուսիոյ շահերուն: Եւրոպայի արդի պատմութեան հետաքրքրական մէկ էջը պիտի կազմէ հաւաքածոյ մը անգլիական

այն հրատարակութիւններուն որոնցմով 1895 Էն ետքը բարձրաձայն կը պահանջուէր «մինչեւ իսկ Կ. Պոլիսը ձգել Ռուսիոյ, ջախջախելու համար թիւրքին գլուխը:» Այս պահանջուածը կուգար այն Անգլիայէն որ իր ամբողջ շուքեամբը միշտ կ'ըմբոստանար Ռուսները Կ. Պոլիս տեսնելու գաղափարին դէմ: Բնական է ուրեմն որ Բեյքոյ պուրիի կառավարութիւնը հաշտ աչքով դիտէ եւ քաջալեւորիչ քաղաքականութեամբ հետադարձ վաստակահանք աւելցնուի, քանիչլու ամէն ձեռնարկի:

Իրաւօր քանի մը ամիս առաջ Ռուսիոյ կառավարութեան կողմէն հայ «յեղափոխականներու» հասցէին ուղղուած պաշտօնական յայտարարութիւն մը հանդարտութիւն կը յանձնարարէր կամ գրեթէ կը հրամայէր. եւրոպական մասուրը ենթադրեց թէ թերեւս Ռուսիա հակաթըրքական քաղաքականութեան հետեւելու ժամը ա'լ հասած համարելով կ'ուզէ նախ ձեռքերը սրբել իր սահմաններուն մօտ արեւահեղութեան մասնակցութենէն: Այդ ապամասն ազդարարութեան բոլոր նպատակը թէ եւ որոշակի չզիտցուեցաւ, բայց շատոնց է որ քաղաքականութիւնը երկզիմի կոչուած է: Հայերու միջոցաւ ուստիս եւ թիւրքին փոխազարձ յարաբերութիւններուն անկեղծութեան մասին պզտիկ ինչք մը յիշեմ:

Տասնըհինգ տարի առաջ երբ «Արեւելք» օրագիրը հիմնուեցաւ, Հայկական գործերու մէջ թերթին քաղաքական ուղղութիւնը հակառուսական էր. ան առեւնը կանխարգել գրաքննութիւն հաստատուած չէր ուստի եւ հնարաւոր էր քիչ շատ անկաշկանգ գրել: Թերթին հակառուս յօդուածներուն մասին Գուրը գանգաւորներ եղած էին. ներքին գործերու նախարար Էտհէմ փաշա «Արեւելք» ի ներկայացուցիչը կանչելով յանդիմանեց զինքը ու թերթին ջնջում սպաննաց այդ ընթացքին յարատեւութեան պարագային: Նախարարը բարձրաձայն աղէկ մը «Արեւելք» ի ներկայացուցիչը լուալէ յետոյ կը հանդարտի ու ցած ձայնով կ'ըսէ.

- Հիմա աս ամէնը լսեցի՞ր:
- Հրամայե՛ր էր:
- Աղէկ. իբր նախարար պաշտօնապէս ըսի ինչ որ պէտք էր, (ու ձայնը շատ աւելի ցածրացնելով), դուք նորէն գիտցածնի՞ք ըրէք, առջի ճամբանիդ շարունակեցէք առանց վախնալու:

Թերեւս չենք սխալիր ենթադրելով թէ Ռուսներն ալ պաշտօնական յայտարարութենէն ետքը ձեռքի տակէ շարունակեան պէտք եղած դիւրութիւնը ընծայել վանի աւելորդին համար:

Վասպուրականի գեղեցիկ առթիւ Պարսկաստանի դրդովելու շատ պատճառներ սենի: Երբ Ռուսները Հայաստանը գրաւեն ա'լ խեղճ Շահերուն թագաւորութիւնը երկաթէ շրջանակի մէջ բանտուելով Պարսկաստան գրեթէ Ռուսիոյ մէկ նահանգը պիտի կրնայ համարուիլ: Պարսից փառավարութիւնը վախնալով այս ապագայէն արդէն ամենաճանր միջոցներ ձեռք կ'առնէ ընդդէմ իր հպատակ Հայերուն որոնց վիճակը բաւական չաւ էր մինչեւ վերջերս: Պարսիկ ժողովուրդը առիթէն կ'օգտուի, կրօնական մուկանութեամբ բորբոքուած, ահեղ ապագայ մը պատրաստելու հայերուն որոնց ներկան արդէն անտանելի դարձած է, ինչպէս կ'երեւի նոյն իսկ թիֆլիզի հրատարակութիւններէն:

Այսպէս ահա վասպուրականի մէջ հայկական շարժումներուն Անգլիան հակակիր կը տեսնենք, Պարսկաստանը՝ թշնամի, Ռուսիան՝ աւարի սպասող: Աւելցնենք ասոնց վրայ թիւրք իշխանութիւնը որ արհամարհելի քանակութիւն մը չէ, ու երբ յիշենք թէ քիւրտ ցեղերը եւ տաճիկներն ալ դաշնակցելով մեզի դէմ կ'ելլեն, մեծ խեղք մը ունենալու պէտք չի կայ համոզուելու թէ վասպուրականի համար ինքնօրէն վարչութիւն յուսալ անկարելի է:

Այս ճշմարտութեան գիտակցութիւնը ունենալով էր անշուշտ որ վանի ժողովուրդը համբերութեամբ կարող եղած էր քիչ շատ տանելի վիճակ մը ստեղծել իրեն համար, եւ բաւական ճարպիկ գտնուիլ գոնէ ինք ազատ մնալու 1895 ի աղէտներէն. բայց «խուսք մը եկուորներ գացին քաղաքը տակնուվրայ ըրին եւ հետեւանքը ան եղաւ որ «քիւրտ ու թիւրք միացած ամբողջ վանը քանդեցին ու կործանեցին», եւ ժողովուրդը՝ յանկարծակիի եկած՝ ահազին ուժի մը դիմացը, ու անպատրաստ, թող տուաւ «որ ոչխարի պէս զինքը ջարդեն»:»

Գործունէութեան ինչո՞ւ վայր ընտրեցին նահանգ մը որ իր դիրքովը բոլորովին անյարմար էր ո՛ր եւ է նպատակի ծառայելու, բացի ուստական շահերը նպատաւորելէ: Եթէ անխուսափելի հարկն է վասպուրականի գրաւումը Ռուսներէն, ինչո՞ւ հայկական արիւնը թափուի յօգուտ Հայութեան ուսուցումին. ինչո՞ւ Հայը իր արիւնովը հեշտացնէ պերսութեան լուծին փոփոխութիւնը: Ժողովուրդի մը արիւնը իր ազատութեանը համար միայն պէտք է թափուի եւ ոչ թէ մէկ լուծէն սրբի լուծի մը փոխանցումին ծառայէ:

ԱՐՓԻՍԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ առաջին չորս թիւերէն մէկը քանի օրինակ շնորհաբար զրկուած ըլլալով մեզի այլեւայլ կողմերէ, պատրաստ ենք զրկելու այն բաժանորդներուն որ ստացած չեն այդ թիւերը եւ կը փափաքին ունենալ:

Նոր բաժանորդագրութիւնները կը սկսինք հինգերորդ թիւէն (մարտ 1):

- 1. Որովհետեւ յաճախ դժուարութիւններու կը մատնուինք կոր մեզի զրկուած մանտա-բոսգներու կամ մընի-օրարներու գանձման մէջ, հարկ կը համարինք յիշեցնել թէ, 1. Պէտք է մանտա-բոսգը կամ մընի-օրարը զրկել Լ. Ֆրանք անուան, վճարելի Լոնտոն (եւ ոչինչ աւելի).
- 2. Ղրկողը պէտք է յայտնէ մեզ այն անունը որով մանտա-բոսգը կամ մընի-օրարը առած է:

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

ԻՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ, ԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ,

ԻՐ ԴԵՐԸ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ (1)

Քանիսուրբին արտասանուած Բարիզ, Աշխարհա-
գրական ընկերութեան սրահին մէջ, 9 մարտ 1897 ին,
նախագահութեամբ Պ. Անապոլ Ֆրանսի:

Նախարան Պ. Ա. Ֆրանսի.

Տիկիններ ու Պարոններ.

Հայ մըն է որ ձեզի իր երկրին վրայ պիտի խօսի:
Պ. Արշակ Զօպանեան, զոր քիչ յետոյ պիտի ունկնդրենք,
Պոլսոյ հայ զաղթականութեան մէջ շատ երիտասարդ հա-
սակէն ինքզինքը ճանչցուց իր մտքին ընդարձակութեամբն
ու աշխուժութիւնը: Իր գործունէութիւնը յատկացուցած էր
Ֆրանսական գաղափարներն իր ազգակիցներուն մէջ տա-
րածելու: Գրականութեանց պատմութեան ուսուցիչ Ազգա-
յին կեդրոնական վարժարանին մէջ, աշխատակից «Հայ-
րենիք» լրագրին, հիմնադիր «Ծագիկ» արուեստի և զը-
րականութեան հանդէսին, իր տոհմային լեզուով թարգ-
մանած է բազմաթիւ ֆրանսերէն գրքեր: Կը սիրէ Ֆրան-
սան և ազատութիւնը: Հայկական գերդաստանին մէկ
հարազատ զաւակն է: Վերջապէս բանաստեղծ է, և զիտէ
ձայն մը տալ ժողովրդական մտածումներուն:

Ահաւասիկ այն ոճիւրները որոնց համար վտարանդի է
այսօր: Իր Ֆրանսա պանպիստութեանը միջոցին, երեւան
հանեց այն ահռելի և կաղձակերպուած շարքերը որոնց
մէջ երեք հարիւր հազար Հայեր կոտորուեցան հրամանովը

(1) «Նորկեանք» ի ներկայ թիւէն կը սկսինք մաս առ մաս
հրատարակել թարգմանութիւնը այն նշանաւոր բանախօ-
սութեան զոր Արշակ Զօպանեան անցեալ տարի Բարիզ
արտասանեց՝ ֆրանսացի ունկնդիրներու խանդավառ բազ-
մութեան մը առջեւ: Առաջին անգամ էր որ Հայ մը և
բոսնական հանրային կարծիքին առջեւ իր ցեղը կը ներկա-
յայնէր այսքան տիրաբար, մեր պահանջումները հիմնե-
լով ոչ թէ նուաստացնող ողորմութեան մը, հապա մեր
ցեղին կատարած զերին վրայ, մարդկութեան մէջ մեր
դրուած այլ մանաւանդ գրաւելու ընդունակ տեղին վրայ:
Ուրախ ենք հաստատելու որ փայլուն ատենաբանը՝ իր ա-
ռաջագրութիւնը հասկցուած տեսնելու գոհունակութիւնը
ունեցաւ: Ներկայ Ֆրանսացիները՝ ատենաբանը և անոր
չեա իր ցեղը ծափահարեցին իրր ներկայացուցիչը այդ-
քան կենսալիւր ողիի մը, այդքան բարձր ձգտումներու ու
այդքան զօրեղ մտաւորականութեան մը: Մամուլն ալ այդ-
պէս դատեց, ու Ֆրանսայէն զուրս ալ այդ ատենաբանու-
թիւնը մեծ ազդեցութիւն ունեցաւ ի նպաստ Հայերուն:
Արդէն սուսերէնի և հունգարիէնի թարգմանուած է և
բոլոններէնի թարգմանուելու վրայ է: Հիմակ, անոր հայե-
րէնը ներկայացնելու գոհունակութիւնը ունինք «Նոր
կեանք» ի ընթացողներուն:

սուլթանին, այդ զօրութեան և տկարութեան հրէշին, այդ
սարսուփէն յիմարացած բռնակալին: Պ. Զօպանեան Հայեր
Շառնըզանին հետ, կը բաժնէ պատիւը՝ ֆրանսացի մու-
ղովրդին ճանչցուցած ըլլալու այդ զարհուրելի խողիտղու-
մը որ ամիսներով դիւանագիտական գաղտնիք մը դարձած
էր: Եւ իրօք, Պ. Զօպանեան 1896 յունիսին Բարիզ հը-
րապարակեց հպաքածոյ մը Հայաստանէն գրգռիչ նա-
մակներու, պարզ և ահաւոր նկարագրութիւններ, որոնք,
Պ. Ֆոնտ Բլէմանսոյի մէկ վեհանձն յօդուածովը յառա-
ջաբանուած, զարհուրանքով ու վայրոյթով ցնցեցին հա-
սարակութիւնը զոր իր կառավարութիւնը և լրագրիներուն
մեծագոյն մասը դէպքերուն գրեթէ անտեղեկ պահած էին:

Այս սրտատ մարդիկը Արեւելքի քրիստոնէաները Եւ-
րոպայի հանրային զգացման պաշտպանութեանը ևն-
թարկեցին:

Տիկիններ ու Պարոններ,

Պարոն Արշակ Զօպանեան մեզի պիտի ծանօթացնէ
դրականութիւնն այն երկրին զոր իր քթագողութիւններէն
միայն կը ճանչնանք: Պիտի պարզէ ձեզի հայ մտածողը
դարձրուն ընթացքին մէջ, և պիտի լսելի ընէ մերթ զիւ-
ցազմական և մերթ ոգրազիմ ձայնը ժողովրդի մը որ այս-
քան դարէ ի վեր իր հայրենիքէն այրիացած, կը տեւէ,
կը տոկայ, կը յուսայ: Պիտի ըմբռնենք որ այս Հայերը
արդարեւ ժողովուրդ մըն են՝ լեզուին և կրօնական հաւա-
տալիքներուն կապովը, միեւնոյն յիշատակներուն և մի-
եւնոյն յայտերուն հաղորդութեամբը, զգացումներու եղբայ-
րակցութեամբը, և միեւնոյն կեանքով ապիւրու, միեւնոյն
հոգիով մտածելու յարատեւ կառքովը: Եւ պիտի խոստա-
վանինք որ այս ժողովուրդը անչիմ ու կորովի, աքեւմըտ-
եան աշխարհին ամէնէն բարձր գաղափարները իւրացնե-
լու հակամէտ, կրաւունք ունի այնքան իր հանձարովը որ-
քան իր գեթազղութիւններովը՝ համակրութիւնը վայելելու
այն ժողովուրդներուն որոնցմէ ծապեցան արգարութեան և
ազատութեան գաղափարները:

Տիկիններ, Պարոններ,

Այն արտասուլոր գեթազղութիւնները որ երեք տա-
րիէ ի վեր հայ ժողովուրդը կը հարուածեն, զանի զուրս
հանեցին խոր մոռացումէն ուր այդ հինաւորաց ազգը թաղ-
ուեր էր և եղբրական համբաւ մը տուին անոր: Եւրոպայի
ուշագրութիւնը, աղէտքին ահազնութիւնէն լաքուած, ցա-
ւակցական շարժումով մը հակեցաւ դէպի մարդկութեան
հետաւոր այդ հատուածը որ գերագոյն շարժարաններէ կը
շարժարուի: Եւրոպայի և Ամերիկայի բոլոր ժողովուրդները
յուզուեցան ի լուր այն դէպքերէն որոնք Հայաստանը ա-
րիւնոսեցին. դահիճներուն գէմ վայրոյթի ցոյցեր, զո-
հերուն ի նպաստ դուժարումներ տեղի ունեցան բոլոր
երկրներէն մէջ. աշխարհական և կրօնական մեծ ալի-
նաբաններ նահատակուած Հայաստանին գատը պաշտ-
պալներէն, և նշանաւոր դրագէտներ՝ պերճախօս էջեղզլ
բացատրեցին այդ զուրի ողբերգութեան կնճառտ պատ-
ճառները: Չեմ ուզեր ուրեմն դէպքերը վիպել ոչ ալ ա-
նոնք քաղաքական մեկնութիւնը ներկայացնել:

Այս վեհանձն գործը արդէն կատարուեցաւ այս երկրին մէջ շատ մը ֆրանսացի տկանաւոր անձնաւորութեանց ձեռքով, որոնց ձայնը անշուշտ աւելի հեղինակաւոր եւ աւելի հզօր է քան իմս: Հայր Շամբլանի հրատարակութիւններէն, Քլէմանսյի, Ռոշֆորի, Տոմանի, Սէլ-սինի, Պօէնի, Պէտրուայի եւ այնչափ ուրիշներու բազմութիւ յօգուածներէն, Անպոլ Լըուա-Պօլիտի, Լէոն Մառիլիէի, Բիէն Քիլեանի փաստալից բանախօսութիւններէն եւ Ալպէն Վանասալի հոյակապ ուսումնասիրութեանց, Տընիս Քոշէնի, ար Մէօնի եւ Փոսէնի խորհրդարանին մէջ հարցապնդումներէն եւ Վիլբրոն Պէտառի հիւանալի զբքէն յետոյ, ա՛յլ պէտք չունիմ դէպքերուն իրականութիւնը հաստատելու եւ ըսելու թէ Եւրոպան ո՛րչափ յանցաւոր եղաւ իր անպարթեւութեամբը վիթխարի ոճիւր մը քաջալերելով: Ե՞մ կ'ուզեմ խնդիրը նոր հայեցումով մը ցուցնել, ի վեր հանել անոր մէկ կողմը որ ինձի համար ամենէն կարեւորն է եւ որ մինչեւ հիմա մութի մէջ մնաց: Կ'ուզեմ ըսել չէ թէ հայ ժողովրդին ի՞նչպէս տառապիլը, այլ այդ ժողովրդին ի՞նչ ըլլալը:

Եւ կարծեմ Եւրոպայի, ու մանաւանդ Ֆրանսայի մէջ, քիչ տեղեկութիւն ունին այդ ժողովրդին ի՞նչ ըլլալուն վրայ: Եւ այդ անդիտութեան պատճառով է որ սկիզբները շատերը հատուցին Հայաստանի խնդիրը խեղաթիւրելու համար զարքնուած սխալներու: Չեմ ուզեր յիշեցնել ձեզի այն օրերը ուր գտնուեցան լրագրիներ որ ուրացան շարդերուն իրականութիւնը, հոչակեցին թէ Հայերը խռովարարներ, Կոնստանտնուպոլիսէն, թէ անողորմաբար կը մորթէին այն խեղճ բարի Տաճիկները, եւ թէ կարգապահ հոնութիւնը, Տաճիկաստանի կարգապահութիւնը կը խանգարէին:

Այս բանախօսութեան մէջ, իմ նպատակս է հայկական խնդիրը լուսարանել հայ մտածման պատմութեամբը: Պիտի ըսեմ թէ ի՞նչ մտաւորական կեանք ունեցած է այդ ազգը եւ մանաւանդ թէ ի՞նչպէս իր գրականութիւնը իր քաղաքական կացութեանը վրայ ներգործած է: Որովհետեւ ժողովրդի մը գրականութիւնը եւ գոյութեան պայմանները այնքան սերտ կապերով միացած են որ մէկուն ուսումնասիրութիւնը միաներունն ալ հետը մէկտեղ կը բերէ. երկուքն իրար կը մեկնեն, եւ իրար կը լրացնեն. եւ մասնաւորապէս Հայերուն մէջ, գրականութիւնը, մանաւանդ այս դարուս, ժողովրդին ընկերական կացութեան արդիւնքը եղաւ, եւ բարոյական հզօր ազդակ մը անոր հոգւոյն ու ճակատագրին վրայ ներգործող: Գրականութիւն մը եւ պատմութիւն մը ունենալնուն համար է որ Հայերը ոտքի ելան բարբարոս բռնակալ կառավարութեան մը դէմ եւ արդարութիւն պահանջեցին կարենալու համար ապրիլ, մտածել եւ գործել:

Այս կէտը կարեւոր է դիտել սալ, անիրաւ սխալը ցուցնելու համար անոնց որ Հայկական խնդիրը նկատեցին իբրեւ եւրոպական այս ինչ պետութեանց հիւսուած խաղ մը: Հայաստանի խռովութեանց այս բացատրութիւնը Հայոց անպատուիչ է: Անոնք ո եւ է օտար ազդեցութեան պէտք չունենի՝ ոտքի ելլելու համար. ասոր մղովն

ցան իրենց դարաւոր պատմութեան մէջ կուտակուած օրինակներէն, իրենց մեծ գրապահներուն ձայնէն եւ նոյն իսկ այն ծայրայեղ սառապանքներէն որոնց տակ տաճիկ կառավարութիւնը զանոնք երկայն ասեմէ մը ի վեր կը ձգմէր:

Այս տեսակետով, ամենէն աւելի այս տեսակետով է որ պէտք էր Հայերը շահեկան երեւնային: Անոնք Եւրոպայի ժողովուրդներուն համակրութեանը իրաւունք ունին, ոչ թէ միայն որովհետեւ ըրիստոնեայ են, ոչ թէ պարզապէս որովհետեւ դժբախտ են, այլ որովհետեւ կեանքի, աշխատութեան եւ քաղաքակրթութեան տարր մըն են, որովհետեւ Արեւելքի այն ցեղն եղած են որ ամենէն աւելի դէպի արեւմտեան միաքը ուղղուած է, որովհետեւ այդ դժբազդութիւններն ունեցան ճիշդ անոր համար որ իրենց մարդկային իրաւունքները ձեռք ձգելու յաջողեցին: Երբեք տեւ, վերջապէս, — ու Եւրոպացիներ են որ այս պատիւը ասոնց ըրած են, — որովհետեւ Փոքր-Ասիայ Յոյները եղած են:

Ա.

ՀԱՅԵՐԸ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Հայերը ամենահին ժողովուրդ մըն են: Արիական ցեղէ, եղբայր Պարսից ե Յունաց, յաճախապէս ու խորին խառնուրդներ ունեցած են, իրենց կրկայն ու արկածալից կեանքին մէջ, սեմական ու դժբանական ազդերու հետ, եւ իրենց յեղուն, որ հնդեւրոպական ընտանիքին կը պատկանի, մեծապէս ճիւղացած է օտար տարրերով, ինչպէս իրենց ֆիզիքական տիպը բազադիտական զանազանութիւն մը կը ներկայացնէ:

Երկիրը զոր Հայերը ունեցած են իբր Հայրենիք, դէպքերուն համեմատ՝ յաճախ ընդլայնած կամ ամփոփած է իր սահմանները: Դժբաղդաբար այդ երկիրը բոլոր արշաւանքներուն ճամբուն վրայ կը գտնուէր, եւ անոր գեղեցկութիւնը, բարբերութիւնը եւ հարգութիւնը Ասիայ աշխարհակալ ցեղերուն ցանկութիւնը զրգոցեցին: Եւ քանի քանի անգամ Հայաստան իր անկախութիւնը կորսնցուց. յաջորդաբար ախրապետութիւնը կրեց Ասորեստանցաց Մարաց, Պարսից, Մակեդոնացաց ու Սելեւկեանց, Պարթեաց, Սասանեանց, Արաբացաց եւ ուրիշ շատ մը մահաւոր ժողովուրդներու: Հայոց պատմութիւնը արիւնոտ էլեր շատ ունի: Բայց, ազէաքներու անընդհատ շարքի մը մէջ, Հայը միշտ դիմացկուն ոգի մը եւ ինքնապահպանութեան անշնչելի ուժ մը ցոյց տուած է: Եթէ երբեմն ահազին ու կոյր ուժերէ ջախջախուած է, յաճախ յուսահատ հերոսութեամբ մը մաքառած եւ մէկէ աւելի անգամ իր քաջութեամբն ու ճարպկութեամբը անկախութիւնը վերստացած է: Հայոց պատմութիւնը փճացումներու եւ վերականգնութեանց յաջորդութիւն մըն է: Երբ Հայկազնեան հարստութիւնը կը ջնջուի Մեծն Ալեքսանդրի ձեռքով, գերութեան շրջանէ մը յետոյ՝ Արշակունեան հարստութիւնը կը կանգնի. երբ այս փառաւոր հարստութիւնը, որու միջոցին, Մեծն Տիգրանի օգով Հայերը Ասիայ ամենէն հզօր ազգը կը դառնան վայրկեպն մը, Քիլիկիայ ու կը կործանի պարսկական ճնշմանը նմրքեւ, կը տեսնենք Մամիկոնեաններուն առաջնորդութեամբ ըրիստոնեայ Հայաստանին դիմադրութիւնը որ կը ցցուի մեծհզօր հեթանոս

Պարսկաստանին դէմ. յետոյ, Բագրատունեան թագաւորութիւնն է արաբական զերիշխանութեան տակ, զրոտկան, գեղարուեստական և կրօնական մեծ շարժումով մը. վերջապէս, զարհուրելի փորձանքներէ յետոյ որոնք ցեղը ծայրայեղ տկարացման մը կը հասցնեն, հայկական կիլիկիոյ մէջ ծագումը կ'երևայ Ռուբինեանց քաջ իշխանութեան, որ հայ-լատին քաղաքակրթութեան սկզբնաւորութիւն մը կ'ուրուագրէ եւ կ'աւարտի Լուսինեան ընտանիքէն Փրանսատոհմ թագաւորներով. ու զեռ վերջերս, այդ նոյն ժողովուրդը, հակառակ թմրեցուցիչ լուծի մը տակ հինդ դարու ծանր ստրկութեան մը, կրցաւ հարկաւոր բարոյական կորսիւն ունենալ յառաջ բերելու համար մեծ ցնցումը որ իրեն սուղի նստաւ, բայց որ Տաճկաստանը զըրդեց ու Եւրոպան ստիպեց աւազակներու որջ վարձած երկիր մը բնակելի ընելու միջոցները գտնել:

Ամէն ատեն, հայ ցեղը անկախ ոգի մը ունեցած է եւ ըմբոստ, հակառակ հզօր տիրապետութեանց. ինքզինքը հակամէտ ցուցուցած է բոլոր յառաջիմութիւններուն, բոլոր յանուզն ու ազատ դադափարներուն. Արեւելքի ցեղերուն առաջիններէն մէկը եղած է նոր ոգին իւրացնելու: Անկման շրջաններուն, չէ խառնուած տիրող տարրերուն, եւ ընդհակառակն, իր մեծութեան օրերուն, յաջողած է, բնականօրէն, առանց բռնապատման, իր ճակատութեանը շնորհիւ, իր մէջը ձուլել բոլոր այն այլազան ցեղերը որոնք եկած էին Հայաստան հաստատուել. Մարաց, Պարսից, Պարթեաց, Ասորաց, Վրացաց մեծ գաղթականութիւնները եւ Հրեաներն իսկ, որ այնչափ գծաւոր կը ձուլուին եւ որ Հայաստանի մէջ ստուար գաղթականութիւն մը ունէին, խառնուեցան հայ տարրին. Արշակունեան տոհմին պարթեւ թագաւորները որոնք Բ. դարէն սկսեալ (Ք. Ա.) եկան Հայաստանը կառավարել, հայացան. Մամիկոնեաններու տոհմը, որ չինական ծագում ունէր, խորապէս հայկական դրոշմով հերոսներ արտադրեց. եւ Բագրատունի թագաւորները, որոնց մէկ քանին իմաստութեան եւ հայրենասիրութեան տիպարներ եղան, հայացած Հրեաներ էին:

Հայը արտադրող ցեղ մը եղած է. ճարտարագործներ, արհեստաւորներ, երկրագործներ, բանուորներ տուած է, եւ մեծ վաճառականութիւնը ձեռքն առած է Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ: Հնարամիտ է եղած. Եւրոպացիներէն շատ առաջ, ընդժողկայ անցքին զադափարն յղացած է (Հայաստանի մէջ կայ այդպիսի ներքնուղի մը, շատ հին շինութեամբ, Եփրատին տակ փորուած), եւ Հայաստանի շատ մը տեղուանք, կը դանուին անտաններ որոնք արուեստականօրէն անկուած են: Արուեստագէտ է եղած. պալատներու, եկեղեցիներու, վանքերու, կամուրջներու, զետնափորներու հոյակապ մնացորդներ, յանուզն ու քմածին ճարտարապետութեամբ, իր զեղազիտական կարողութեանց վկայ կը կանգնին. եւ միշտ իր զրակասութիւնը ձգտած է զէպի Արեւմտեան մտածումը, զէպի նոր ու ազատ ձեւերը:

Անճոռնի կերպով աննպաստ քաղաքական ու աշխարհագրական պայմաններ արգիլած են Հայերը իրենց մտա-

ւոր կարողութիւնները կատարելապէս զարգացնել: Եւ եթէ այդ առասպելականօրէն բերրի բնութեամբ երկրին մէջ, այնքան առատ ամէն տեսակ հանքերով, այնքան փարթամ՝ անտառներով, աղբիւրներով, արօտատեղիներով, այնքան հարուստ՝ հեշտաւէտ կամ վեհաշուք տեսարաններով, լիճներով, գետերով, հովիտներով ու լեռներով, եւ այնքան այլազան կլիմայով, այդ երկրին մէջ ուր կը գտնուին ծաղիկներուն ամէնէն զարմանազարնները, պտղաւորներուն ամէնէն համեղները, ուր աւանդութիւնը իրաւունք ունէր Երեմը զետեղելու, և ուր մասնաւոր, որուն վրայ կը խօսի Աստուածաշունչը, իրօք պայտնութիւն ունի, եթէ լայն ու պեղծ քաղաքակրթութեան մը համար սքանչելի օժտուած այդ երկրին մէջ, Հայերը, իրենք ալ օժտուած յատուրական ջրակուլութիւններով, չկրցան արտադրել զեղեցիկ ու մեծ մարդկային գործը որ կարելի էր, յանցանքը երկրին հախորդ կացութեանն է եւ պէս պարագային որ հոն կը գտնուէր ճարտարագործ եւ քրիստոնեայ ժողովուրդ մը՝ աշխարհակալ աւաքող ու հեթանոս կամ մահմետական ժողովուրդներով ուղաշարչած: Բայց պա իրաւ է որ այդ երկրէն անցնող եւ առաւել կամ նուազ հոն իշխող բոլոր ցեղերէն, նորէն Հայն է որ աշխատութեան, արտադրութեան, քաղաքակրթութեան հեաքեր թողած է: Մանաւանդ Տաճիկներուն Հայաստանի տէր դառնալէն յետոյ, երկրին մէջ գտնուող բոլոր ցեղերէն, միայն Հայն է որ աշխատած եւ պրտադրած է: Տաճիկ մը, խորշիտ Էֆէնտի, 1862ին, տեղւոյ վրայ կապարուած հետաքրքրաշարժ անկեղծութեամբ ուսումնարարութեան մը մէջ, կը գրէ. «Հոս, Վանի մէջ, Հայերուն ձեռքն ին բոլոր արհեստներն ու երկրագործչութիւնը: Տաճիկները նպարտաւճառ են միայն, և անոնք ալ շատ սակաւաթիւ. Հայը աշխատասէր ժողովուրդ մըն է, մահմետականը՝ ընդհակառակն: Տաճիկները կ'ուզեն տիրոջ պէս ապրել, եւ բան մը չեն ըներ, ժամանակին սրճարաններն ու պանդոկները կ'անցնեն»: ինչ որ խաւրջիտ դիտած է Վանի մէջ, ճշմարիտ է ամբողջ Տաճկաստանի համար: Գալով Քիւրտերուն, անոնց միակ արհեստը աւազակութիւնն է:

Միջավայրը միշտ աննպաստ ըլլալով իր հայրենիքին մէջ, Հայը իր ուժերուն չափը աւելի օտար երկիրներու մէջ տուած է քան իր երկրին մէջ: Կարելի է ըսել թէ Հայը Բիւզանդեան կայսրութեան սկրեղէն մասը կազմեց, ըմբոստացման, բարենորոգման ու վերակենդանացման տարրը եղաւ հոն, սուաւ արի պատերազմիկներ, նորոգիչ բընազանցազէտներ (մանիքեպն ազանդին, կամ Պալիկեանց կարեւոր շարժումը Հայկուն ձեռքով յուզուեցաւ), եւ տանն աւելի կայսրը որոնց մէկ քանին, ինչպէս Չմշկիկչ Լեւոն, մեծ գէմքեր են, եւ Հայ մըն էր Պըրսերեսիոսը Գ. դարուն ամէնէն անուանի ճարտասանը, որուն հանձարին առջեւ, իր յոյն աշակերտ Խենաբիտին ըսելուն նայելով, գուռը Յուլիանոս Ուրացոյցի հսկ խոնարհեցաւ և որուն Հոռոմ արձան կանգնեց սա վերտառութեամբ. «Քաղաքն եր ու թ ա դ ու հ ի ն Հ ո ո մ՝ ք ա ր տ ար ի օ ս ո ո լ թ ե ա ն թ ա գ ա լ ո թ ի ն»: Երբ յոյն Բիւզանդիները տաճիկ Սթամպոլը գարձաւ, Հայը, ինքզինքը միշտ քրիստոնե-

եայ պահելով հանդերձ, շարունակեց մեծ ու տարօրինակ մայրաքաղաքին կենսական տարրը մնալ. իր ձեռքն էին նորէն վաճառականութիւնը, զեղարուեստները, արհեստները, իրմէ կ'ելլէին վարչական անձնատուութիւններ, ել՝ մտազէտներ, պետական մարդեր, արուեստագէտներ եւ եւ արհեստագործներ: Եզրիպտոսը իր վարչական կերպարանափոխութիւնը պարտական է Հայու մը, Նուպար փաշային: Պարսկաստան, Բուրնիա, Հունգարիա, Հայերը վաճառականութեան, արուեստներու եւ վարչութեան մէջ կարեւոր դեր մը խաղացած են եւ դեռ կը խաղան: Ռուսիա, Հայը արտադրեց առաջնակարգ պատերազմիկներ ինչպէս Տէր-Ղուկասոֆ, Լազարէֆ, Պէկուզով, Արդազեհեանի, Մադաթով, պետական մարդեր ինչպէս Լորիս Մէլիքով եւ արուեստագէտներ ինչպէս Ազադեան զոր ուստական քննադատութիւնը Ռուսիոյ մեծագոյն ողբերգուն հոշակեց:

Այս մեծ մարդիկը, իւրաքանչիւրն իր շրջանակին մէջ, նոր ոգիին փոխանները եղան բնապետական Արեւելքին միջին ուղւոյն դէմ: Վեհապանձ զօրութեամբ մը թարգմանեցին ցեղին հոգին, որ հինաւորց Ասիային խորէն դէպի Եւրոպայի երիտասարդ մարդկութիւնը կը հասի եւ որ սահմանուած է երկու աշխարհներուն միջեւ միջնորդի դերը կատարելու: Բիւզանդեան կայսրութեան պատերազմիկները յունական գաղափարը պաշտպանեցին իսլամին ուժերուն դէմ. կողկասի հերոսները, Պարսկին ու Տաճկին մէջ՝ քաղաքակրթութեան թշնամին ջախջախեցին, եւ Նուպար փաշա Եզրիպտոսը ազատեց արեւելեան ահռելի կամայականութեանէն՝ այդ երկրին տալով անխախտ արդարութեան եւրոպական սկզբունքներու վրայ հաստատուած կառավարութիւն մը:

Բայց եթէ իրենց սեպհական հայրենիքին մէջ Հայերը չեն կրցած իրենց իրենք արտայայտել իրենց մտաւոր կարողութեանց ամբողջ ընդարձակութեամբ, սովորութեան ու քաջութեան բազմաթիւ ապացոյցներ տուած են այնտեղ. եւ Հայոց պատմութեան ճակատը դրուելու յարմարագոյն բնաբանը՝ Նաբոլէոնի սա վեհ խօսքը կրնայ ըլլալ. «Պատիւ՝ դժբաղդ քաջութեան»:

Հայերը, անհատապէս, յաճախ աւելի մեծ եղած են օտար երկրի մէջ, բայց իրենց երկրին մէջ աւելի հայ, աւելի ինքնուրոյն, աւելի իսկատիպ են եղած, եւ իբր ժողովուրդ՝ այնտեղ կատարած մասնաւոր դեր մը որ իր կարեւորութիւնը ունի:

Արեւելքի խոշոր ցեղերուն մէջ, սրունք իրենց անձնատուութիւնը հաստատած են հսկայական աշխարհակալութիւններով, բայց որ, իրենց յեղակարծ, ծայրայեղ եւ կարճատեւ զօրութեան շրջաններէն յետոյ, լիովին անհետացած են կամ անշուք բեկորներ միայն կը թողուն, Հայերը խուլ, գծնդակ եւ այլապէս մեծ պաշտօնն ունեցան իրենց իրենք խելայեղ յամառութեամբ մը պահպանելու, հակառակ վիթխարի արշաւանքներուն եւ անհեթեթ լուծերուն: Լեռները, կիրճերը, անձանները, լիճներուն մէջ զանուած կղզիները, օրոնցմով առատ է իրենց երկիրը, ապաստան դարձան անոնց՝ նեղութեան օրերուն. խրոխտութեան ու դիմադրութեան աւանդութիւններ զանոնք

փրկեցին վերջնական անկումէն. տառապելու վարժուած, տառապանքէն նորոգուելով, աւելցին ու մնացին, միշտ վերածնող կենդանութեամբ մը: Ամենէն ահեղ արշաւանքներէն յետոյ, կը աւաննեց որ ցեղը կը ցցուի նորէն, իր դոյութիւնը կ'ապացուցանէ, ազդային գործը կը վերականգնէ: Եւ դարաւոր ու տաժանելի ճիգն այս ժողովրդին որ հոգով ու մտքով միշտ դէպի Արեւմուտք կը գտնար եւ Արեւելքի ցեղերուն յառաջխաղացութեանն ու ամբողջ ասիական ոգիին՝ անընդհատ դիմադրութիւն մը կ'ընծայէր, Եւրոպային մատուցած է ծառայութիւն մը որ անխրաւարար մոռցուած է այսօր. թումբը եղաւ ան, սրունք դէմ Արեւելեան կոհակը, դէպի Արեւմուտք իր խուժմանը մէջ, դարերով եկաւ իր կատարութիւնը յագեցնել: Հեթանոսական թուականին վերջերը, Հայաստան Հռոմայեցոց համար մարտնչեցաւ ընդդէմ Պարսից. եւ քրիստոնէութեան յաղթանակէն յետոյ, Բիւզանդեաններուն դաշնակից եղաւ Արաբացոց դէմ, եւ օգնեց իրաւապահներուն ընդդէմ իսլամին: Այն թէ եւ երբեք իր անձկութեան օրերուն չօժանդակուեցաւ Եւրոպայէն, թէ եւ իր վարժունքովը ասիական ժողովուրդներուն աւելութիւնն ու մոլեգնութիւնը գրգռեց իր վրայ, անիկա միշտ նախընտրեց Ասիոյ մէջ եւրոպական քաղաքակրթութեան յառաջապահ գունդն ըլլալու ապերախա ու կարծր դերը պահել:

(Շարունակելի) ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆ

ՃԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԻՋԵՐ

Կ. ՊՈԼՍՈՅ

ՊԱՇՊԱՆՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻԻՆԵՆԵՐԸ

Է.

1890—1891

ԴԻԿՏԱՏՈՐՈՒԹԻԻՆ ԱՔԻԿ ԷՖԷՆՏԻ ՈՒՆՃԵԱՆԻ

Ոստիկանութեան նախարար Գեամիլ պէյ, թոյլ բնաւորութեամբ բարեմիտ հայասէր մը, Գուսթաբուի ցոյցին օրը անմիջապէս պաշտօնանկ ըլլալով, իրեն յաջորդեց Նազըմ պէյ: Մինչեւ 1890 յուլիս 15 Կ. Պոլսոյ ոստիկանութեան նախարարին քաղաքական արտակարգ կարեւորութիւն չէր ընծայուած, զէթ Հայերուն կողմէն. ա՛լ ասիկ ետքը հայկական ինդրին ընդդիմադրութեան կեդրոնը Պապը-Չապիէն պիտի դառնայ, նոր նախարարին լափիչ գործունէութեան ու փառատենչ ձգտումներուն դաշնակցութեամբը:

Մինչեւ ատ առեմ անձանոթ մէկն էր Նազըմ պէյ, երբեմն քաղաքագետութեան պաշտօնատան մէջ մէկը թուպ ձի, ու դեռ նոր կառավարիչ Բերայի, ահա մէկէն ի մէկ կը կոչուէր ծանրաժանր պատասխանատուութիւններով բեռնաւարուած պաշտօնի մը, շնորհիւ պաշտակական պաշտպանութիւններու:

Ազատականութեան անցեալով առիւ երիտասարդ մըն

էր ոստիկանութեան նոր նախարարը, երբեմն համակիր կուսակից Երիտասարդ-Թիւրքիոյ, ու հիմա ուրիշներուն պէս, ամէնուն պէս, շոգեպինդ վազող մը վայելումի հասեւէ: «Առ ի՛նչ օգուտ» յուսահատութեան հարցականը կը կանգնի Թիւրքիոյ ամէն իսլամին առջեւ երբ տարիքը ա՛լ քսանին կը յաջորդէ. արդէն յոգնած մէկն է երեսնամեկնի յեղափոխ Թիւրքը — եթէ երբեք կեանքի մինչեւ այդ կէտը տակալու քաջութիւնը ունեցած է: Թիւրքիոյ իսլամը անընդունակ է մարտիրոսութեան, զի իրեն զօրավիզը չեն հայրենիքի իտեալը, ցեղի սէրը: Նազըմ պէ՛մ ինքն ալ չէր հաւատար իր երկրին, որուն անխուսափելի կործանումը ամէն օսմանցի իսլամի համար ժամանակի ինչպիսի մըն է լսի: Եւ կեանքի գերագոյն նպատակը, որուն մանաւանդ հիմա կը ձգտի այդ իսլամը, նիւթական վայելումն է: Փառաւորուիլ պաշտօնապէս, հարստանալ ժողովրդին կողմաւորութիւնը, ահա՛ նախկին յեղափոխական իսլամին իմաստասիրութեան վերջին խօսքը:

Այդ պատանանքին աշակերտ մըն էր եւ Նազըմ պէ՛յ որուն տեղը աւելի զնպաստատան մը մէջ կրնար ըլլալ քան թէ Պապը-Չապթին: Նազըմին ո՛չ բնաւորութիւնը, ո՛չ յատկութիւնները ոստիկանութեան նախարարի պաշտօնին կը յարմարէին: Վեց տարի շարունակ Թիւրքիոյ ոստիկանութեան ամենազօր վարիչը ըլլալէ յետոյ, պաշտօնէն հրաժարած օրը այնքան խակ էր արհեստին մէջ որքան պաշտօնին սկզբնաւորութեանը: Հայկական շարժումները իր մասնագիտութիւնը եղան, ու երբեք չկրցաւ յեղափոխական ո՛ր եւ է ձեռնարկ նախապէս իմանալ: Մամբրէի մը ինքնամատոյց մասնութիւնները իր յաջողութեան հիմը կազմեցին, անոնք ալ անցեալին կը վերաբերէին. բայց անկէ ետքը վեց տարուան մէջ չկրցաւ ո՛չ մէկ խորհուրդի զեկուցումը ունենալ ոստիկանութեան հաստատութեամբ կամ ճարտարամտութեամբ: Իր աչքերուն տակ Պոլիս յեղափոխական մարմինները կը գործէին, անպարտմ երթեկեկութիւն յեղափոխականներու, ինչ առաւ ներմուծում արասասհմանեան զրգոյիչ հայ թերթերու, ու սպաննութիւնները որոնք իրարու կը յաջորդէին, ու ցոյցերը որոնք կը սարքուէին, ու ոստիկանութեան նախարարը որ այս ամէնէն բան մը չէր իմանար առաջուց: Իրաւ է որ սպաննութիւն ընողներէն ոմանք բռնուեցան, բայց գործը կատարելէ յետոյ, եւ տեղն ու տեղը. ինչ որ ոստիկանութեան նախարարին արժանիքը չապացուցաներ: Հայեր խմբովին հաւաքուեցան ու բանտարկուեցան: Դիպուածը որոնք որ բերաւ, ոստիկանութիւնը անոնք ժողովեց զընտանները լեցուց, բայց ո՛ր եւ է հասարակ ոստիկան կարող է այս հաւաքումը կատարել:

Նազըմ պէ՛յի ոստիկանական անկարողութիւնը փոխանակ անոր տապալումը փութացնելու, ընդհակառակը նպաստեց աստիճանէ աստիճան բարձրացումին: Աշըգեան պատրիարքին գնտակահարութենէն յետոյ Նազըմ պէ՛յ ապահոված էր սուլթանը թէ Պոլիս այլ եւս ո՛չ մէկ հայ յեղափոխական կը գտնուի. քիչ ետքը Սիմոն պէ՛յի զեպքը ու Պոլսոյ եկեղեցիները խրկուած Հնչակեան հրաւիրաբերը որոնցմով Աշըգեան պատրիարքին հրաժարականը պարտաւորիչ կը դառնար, այդ լաւատեսութեան

հերքումը եղան. ու մինչ Նազըմ պէ՛յի աքսորուելուն կը սպասուէր, ահա վեգիտութեան բարձրացումը հրատարակուեցաւ: Նազըմ պէ՛յի բոլոր ճարտարութիւնը կը կայանար սուլթանը ափը աննելով խաղցնելու մէջ, աշակցութեամբ պալատական Լուծֆի աղային և Արիֆ պէ՛յին որոնց պաշտպանեալն էր ինքը: Սուլթանին վրայ ազդելու էն զօրաւոր իշխոյն էր օսմանեան նախարարութեան գլխուն տիրապետող զօրութիւն մը դառնալ, ուստի սկսաւ նկրտիլ Դուռը իրեն հպատակեցնելու գերագոյն իշխանութիւն մը անզգալապէս ձեռք բերել: Այս ձգտումին յաջողութեանը մէջ կը կայանայ Նազըմ պէ՛յի երկարատեւ պաշտօնավարութեան եւ բաղաւորութեան գաղտնիքը:

Այդ թուականին, 1890, սատրազամը ծերունի Քեամիլ փաշան էր, ու ներքին գործերու նախարարը Միւնիր փաշա. երկուքն ալ խոհեմ քաղաքագետներ որ Նազըմի գործունէութիւնը բարկութեամբ գիտելով հանդերձ անկարող կը գտնուէին զայն ջախջախելու: Երկարքի գրութիւնը կառավարական անիշխանութիւն է. ոստիկանութեան պետը որ կառավարական կարգերու համաձայն ներքին գործերու նախարարութեան ստորադասեալ պաշտօնեան ըլլալու էր, անոր իշխանութիւնը չէր ճանչնար եւ իր յարաբերութիւնները ուղղակի Երլարզի պալատին հետ էին: Եւ սակայն Դուռը Նազըմի տապալումը անհրաժեշտ կը նկատէր թէ՛ իր հանգստութեանը եւ թէ՛ ներքին քաղաքական խնդիրներու համար: Հայոց պատրիարքարանը այս նպատակին հասնելու իբր յարմարագոյն միջոց ծառայեցնել մտաբերուեցաւ, եւ այս քաղաքականութեան գործադրութեան միջնորդը եղաւ Աբիլ էֆէնտի Ունճեան, որ 1890 նոյեմբերէն ի վեր ստանձնած էր Քաղաքական ժողովի անվամբ պաշտօնը ու ամենաազդեցիկ էր պատրիարքարանին մէջ:

Նազըմը տապալելու գլխաւոր շէնքը եղաւ մասնիչ Մամբրէ վարդապետին խնդիրը: Պատրիարքարանը մտաբերեց պատժել Մամբրէն մինչ Նազըմ իր հովանաւորութիւնը անոր վրայ կը տարածէր: Ոստիկանութեան պետը ինչպէս կրնար լքանել իր յաջողութեան հիմնադիրը: Ուստի զատ, զրկելով Մամբրէն իր պաշտպանութենէն Նազըմ անկէ ետքը շատ գծուարութիւն պիտի կրէր նորանոր մասնիչներ գտնելու: Պատրիարքարանը զգալով ոստիկանութեան տկարութիւնը աւելի և աւելի յամառութեամբ պնդեց Մամբրէն իրեն յանձնուելու պահանջումին վրայ: Վերջնական պատասխանը եթէ մերժողական ըլլար, պատրիարքը հրաժարականը պիտի տար, ինչ որ շատ անխորժ սպառնալիք մըն էր սուլթանին: Այդ հրաժարականով կրնար վերակենդանանալ եկեղեցական առանձնաշնորհումներու գրեթէ մարած խնդիրը. հարկ պիտի ըլլար ազդային ժողով գումարել նոր պատրիարքի մը ընտրութեան համար. ո՛վ կրնար յաջորդել Աշըգեանի. եւ ո՛վ յանձնառու պիտի ըլլար պատրիարքական պաշտօնին երբ ոստիկանութեան նախարար մը կարող էր ոտնակոխ ընել պատրիարքարանին էն անվիճելի նախնական մէկ իրաւունքը իսկ, որ է եկեղեցականները իր հնազանդութեանը մէջ պահել:

Գործը այն վիճակին հասած էր որ կա՛մ Նազըմը պաշ-

տօնանկ պիտի ըլլար, կամ պատրիարքը հրաժարէր. նա-
խարարութիւնը Նազըմին տապալումը կը յուսար, ու Ա-
շըզեան պատրիարք արդէն կը յայտարարէր.

—Ես անկիւայ (Նազըւը) քանի մը օրէն ազլ ընել պի-
տի տամ:

Բայց զիտողութեան արժանի պարագայ մը կար.
պատրիարքը կ'ուզէր Մամբրէն պատժել ոչ թէ իբր մատ-
նիչ, այլ իբր յեղափոխական: Ու արդարեւ պատրիարքը
ներքնապէս յեղափոխական եղած ըլլալու էր եւ արտա-
կարգ յանդիմութեամբ օժտուած որպէս զի յայտարարէր
թէ «որովհետեւ Մամբրէն յեղափոխական գաղտնիքները
կառավարութեան մատնած է, ուրեմն պէտք է պատժուի:»
Աշըզեան պատրիարք Մամբրէի անձին մէջ միմիայն նախ-
կին յեղափոխականը կը տեսնէր, պատուհասուելու ար-
ժանին: Այս տեսութիւնը ձեռնտու էր Նազըմին որ պատ-
րիարքին հետեւեալ լուրը խրկեց.

—Սուլթանը բազմաթիւ յեղափոխականներու ներում
շնորհեց ու հետզհետէ ալ պիտի շնորհէ, ուստի կը խնդրեմ
որ պատրիարքն ալ հաճի ներել յեղափոխական Մամբրէին
քանի որ նորին մեհափառութիւնը արդէն ներած է:

Աշըզեան պատրիարք կ'մկամ մնաց. թախարակն մէջ
ինքն էր բռնուած: Եւ սակայն չէր կրնար տեղի տալ, Ա-
բիկ Էֆէնտիի հրամաններուն տակ գտնուելով: Դիկտա-
տորը մինչ մէկ կողմէն կառավարական նկատումներ ու-
նէր, միւս կողմէն անձնապէս կ'ատէր Մամբրէն որ զինքը
նախատած էր Եֆէնի-Ճամիի հրապարակը, երկուքն ալ ի-
րարու աքտոր ոպառնալով: Այս խնդիրը վերջ ի վերջոյ
լուծուեցաւ Մամբրէի կարգալուծութեամբը, ինչ որ սա-
կայն շճառայեց նախարարութեան զիտումներուն Նազըմի
տապալումին համար: Քանի մը ամիս վերջը Քեամիլ
փաշա եւ Միւնիի փաշա իրենց պաշտօնանկ կ'ըլլային
եւ Նազըմ ու Պատրիարքարան կը մնային դէմ առ դէմ:

Մամբրէի խնդրին մէջ պատրիարքարանին ընթացքը
շատ սխալ եղաւ: Պատրիարք ու վարչութիւն երբ մանա-
ւանդ յուլիս 15 էն ետքը ուզեցին կատարելապէս պահ-
պանողական քաղաքականութեան հետեւելով սիրաշահիլ
սուլթանն ու նախարարները, պարտաւոր էին իրենց գոր-
ծերն ալ յարմարցնել իրենց համոզումներուն: Եթէ բողո-
քարիութեամբ իրաւունք պահանջողներ պիտի չի հանդի-
սանային, ան ատեն իրենց կը մնար վարպետութեամբ
հանդամանքներէն օգուտ քաղել ազգային սառապանքնե-
րը թիթեցնելու համար, իրենց կոչումին համաձայն:
Պատրիարքին առաջին պարտականութիւնն է չխանուիլ
Պալատին, Դրան, թիւրք պաշտօնական աշխարհին ներ-
քին խնդիրներուն ու մեքենայութիւններուն: Գում-Քա-
բուի ցոյցէն ետքը ոստիկանութեան նախարարութիւնը
շատ մեծ դեր մը սկսած էր կատարել մեր ազգային գոր-
ծերուն մէջ: Թիւրքերուն վախը հայկական յեղափոխու-
թենէն, իրենց կրօնական մոլեգնութիւնը, պաշտօնեանե-
րու շահահանգրութիւնը եւ ուրիշ շատ մը հանգամանքներ
միանալով կը ստեղծէին Հայոց համար շատ ծանր կա-
ցութիւն մը: Ամբաստանութիւնն ու զրպարտութիւն, եւ ա-
սոնց ետեւէն՝ բանտ, չարչարանք, աքտոր, մահ, ա'լ Հայոց
բաժինն էին. ու այդ ամէնուն վերին տեսուչը, տնօրէնն
ու վարիչը ոստիկանութեան նախարարն էր:

Ինչ կը մնար պատրիարքին ընել: Նախ ըմբռնելու էր
ան տարրական ճշմարտութիւնը թէ Թիւրքիոյ մէջ էն գո-
րեղ մարզը, սուլթանէն ետքը, ան միջոցին ոստիկանու-
թեան նախարարն էր: Կ. Պոլսոյ թրքական վարչութիւնը
ժօտէն ճանչցողը այս կարծիքին շուտով հերքում չի կըր-
նար տալ: Իր գրասենեակէն սուլթանը կրնայ ամէն գործ
անձամբ տեսնել, քննել եւ մեղել, բայց քաղաքական ու-
տիկանութիւն չի կրնար ընել: Երկրին ապահովութեանը
հետ սուլթանին անձն ալ հզօրապէս կախում ունի ոստի-
կանութեան նախարարէն, ու այդ նախարարը սուլթանին
կատարեալ վստահութիւնը վայելող մը միայն կրնայ ըլ-
լալ: Պոլիս սատրագամէն սկսած ամէն նախարար գրեթէ
բանտարկեալներ են. օրինակի համար, ոչ մէկ նախարար
կրնայ շեղիլ այն ճամբէն որ իրեն որոշուած է բնակարա-
նէն պաշտօնատունը երթալու եւ վերադառնալու համար.
միայն ոստիկանութեան նախարարն է որ ազատօրէն ամ-
բողջ Պոլսոյ մէջ կրնայ երթալ գալ, վասն զի իր պաշտօ-
նին բնոյթը աս կը պահանջէ: Միայն այս պարագան
կրնայ գաղափար մը տալ Զապթիէ Միւշիւրիին վայելած
առանձնաշնորհումներուն վրայ: Պատրիարքին պարտքն
էր ոստիկանութեան նախարարը քիչ շատ գործածել զիտ-
նալ: Անտարակոյս Աշըզեան պատրիարք աղէկ գործ մը
ըրած պիտի ըլլար Մամբրէն վանք մը քշելով, բայց կըր-
նար քիչ մը սպասել, եւ առաջին առիթը կամ պատրուա-
կը գտնելով, հասնիլ իր նպատակին, ինչ որ Նազըմին
ալ գոհունակութիւն պիտի պատճառէր: Իսկ ինչ որ պէտք
էր տնօրինել Մամբրէին, այդ Յեղափոխականները կրնա-
յին ժամանակին ընել: Աշըզեան պատրիարք արուելով
Նազըմին հետ այլ եւս կարող չեղաւ օգտակարապէս ծա-
ռայել մեղմացնելու համար բանտարկեալներուն տառա-
պանքները. մանաւանդ որ աւելի եւս զրգուած՝ Նազըմ
պէյ շատ խստօրէն սկսաւ վարուիլ, ու օր մըն ալ, հինգ
տարի ետքը, վրէժը լուծեց Աբիկ Էֆէնտիէն, զրպարտու-
թեամբ զինքը բանտարկել ու դատել տալով:

Խորէն պատրիարքին իր աթոռը վերադառնալէն յե-
տոյ նոր ոգեւորութիւն մը սկսաւ տիրել պատրիարքարա-
նին մէջ, Աբիկ Էֆէնտիի աշխոյժ, ոգեւորեալ գործունէու-
թեամբը: Վարչական ընթացիկ գործերը արագօրէն եւ
կանոնաւորութեամբ կը տնօրինուէին, ելմտական կա-
ցութիւնը կը բարւոքէր, եւ ազգային հաստատութիւնները
նիւթապէս աւելի ապահով կացութիւն մը կ'ունենային:
Բայց թէ՛ ազգին եւ թէ՛ պատրիարքին բարոյական կացու-
թիւնը ոստիկանապէս խանդարեց Աբիկ Էֆէնտի ուղելով
բռնապետական տիրապետութեան ենթարկել օրագրու-
թիւնը, եւ Ազգային ժողովն ալ իր ըմբռնածին պէս կազ-
մակերպել:

Մինչեւ Աբիկ Էֆէնտիի զիկտատորութեան սկզբնա-
ւորութեանը Կ. Պոլիս հայ մամուլը ազգային խնդիրներու
մէջ բաւական անկախօրէն կը գրէր: Կառավարական
նախարարը գրաքննութիւնը գրեթէ չէր խանուեր մեր ներ-
քին գործերու վերաբերող ուղղութեան, ու քննադատու-
թիւնները ինչքան ալ կ'ծու կամ անիրաւ երեւնային,
պատրիարքարանը մտքէն չէր անցընէր Դրան զիտում ը-
նելով արգելք յարուցանել: Հին ազատականութիւնը որ

մեր եկեղեցական կազմակերպութեան հիմն է, կը շարունակուէր անխափան. պարոց, եկեղեցի, ազգային հաստատութիւններ, ազգային վարչութիւն, երեսփոխանութիւն, ամենքն ալ ազգինը ըլլալով, մասուլը անկաշկանդ իր քըն նագատութիւնները ընելու իրաւունքը պէտք էր վայելեր: Այս էր աւանդութիւնը զոր ջնջեցին Արիկ Էֆէնտի ե խորէն պատրիարք: Պատրիարքը Դրան թ ա գ ի ի գրելով կը բողոքէր օրագրութեան մէջ երեցած այն յօդուածներուն զէմ որոնք իրեն ու վարչութեան մտքին յարմար չէին ի գար. ու ի հարկին Արիկ Էֆէնտի անձամբ Դուռը երթալով խիստ անօրինութիւններ կը պահանջէր օրագրութեան զէմ: Այլ անկէ ետքը ազգային խնդիրներու քննադատութիւնը սահմանափակուեցաւ, ու գրաքննութիւնը ամենախիստ եւ ամենայնաւոր հսկողութեամբ կը շլատէր ո՛ր եւ է կարծիքի արտայայտութիւն: Ու օր մըն ալ, գրաքննութիւնը սկսաւ թող չի տալ նոյն խի պատրիարքին ստորագրութիւնը կրող պաշտօնական մանր մունր յայտարարութիւններէն սկսեալ մինչեւ կոնդակները:

Միեւնոյն ժամանակ ձեռնարկուեցաւ Ազգային ժողովին վերակազմութեանը: Սահմանադրական տրամադրութիւններու համեմատ երեսփոխաններուն մէկ հինգերորդ մասը երկու տարին անգամ մը վիճակով կը դադրի ու նոր ընտրութիւններ կը կատարուին. օրինական այս վերանորոգումը տեղի ունեցած չէր բաւական երկարատեւէ ի վեր: Նոյն ժամանակամիջոցին մեծնողներ, հրաժարողներ պարապ ձգած էին բազմաթիւ աթոռներ. ընտրութիւնները պիտի կրնային նոր երեսփոխաններու մեծկակ թիւ մը տալ: Պատրիարքարանը յաջողեցաւ ջերմապէս պահպանողական երեսփոխաններու ընտրութիւնը յաջողցնել, եւ իր բոլոր ազգեցութիւնը այս նպատակաւ գործադրեց, մանաւանդ նահանգները ուր գաւառական երեսփոխանութիւնները քուէարկեցին պատրիարքարանէն իրենց իրկուած ընտրելիներու ցանկը: Այսպէս ահա պատրիարքը եւ Ռենձեան Արիկ Էֆէնտի ունեցան հլու հպատակ Ազգային ժողով մը: Ու հիմա յեղափոխականները ընկճուած, մասուլը պրկուած, երեսփոխանութիւնը հաճոյակատար, ա՛լ պատրիարքարանը վստահ էր թէ ազգային գործերուն կըրնար իր ուզած ուղղութիւնը աալ: Ո՛չ ոք մտաբերեց թէ իր ներքին գործերուն համար անյիշատակ ժամանակներէ ի վեր չսփաւոր ազատութիւն վայելող ժողովուրդ մը երբ բոլորովին պրկուի, կաշկանդուի, ահեղ պայթումը անխուսափելի է: Մամուլին ու երեսփոխանութեան անկաշկանդ անկախութեան մէջ պէտք է փնտռել անբոյժ ապաստանարանը ամէնուն համար. իսկ Աշրգեան պատրիարքը ու Արիկ Էֆէնտի Ռենձեան կարծեցին թէ երկաթէ բռնապետութեամբ մը կարող էին հանդիստ ննջել. զարթնումը սակայն սոսկալի պիտի ըլլար:

1890 յունիս 3ի մոտացումէն յետոյ, այլ եւ նշանակութեան արժանի ո՛ր եւ է որո՞ծ չկատարուեցաւ ազգային շրջանակին մէջ. ազգը յոգնած էր եւ ընդհանուր հանգրտութեան մը պէտքը կը զգար, ուստի եւ Արիկ Էֆ. Ռենձեան կրցաւ իր դիտաւորութիւնը հանդարտօրէն շարունակել: Սակայն 1889ին ընտրուած կրօնական եւ ֆաղաքական ժողովներուն սահմանադրական երկամեայ պաշտօնավա-

րութեան շրջանը կը վերջանար նոյն տարին: Խնդիր էր թէ վարչութիւնը օգտուելով պարագաներէն պիտի դրժէր օրէնքին եւ պիտի շարունակէր պաշտօնավարել առարկելով թէ սուլթանը չուզեր Երեսփոխանութեան գումարումին հրաման տալ, ուստի եւ վարչական նոր ընտրութիւնները անհնարին են, որովհետեւ պատրիարքարանի վարիչները հարկադրուած են չհրաժարիլ իրենց պաշտօնէն:

Այդ 1889-91ի վարչութեան գործերուն մասին ի՛նչ որ ալ ըլլան մեր կարծիքները, սակայն անոր անգամները պարտաճանաչ անձնաւորութիւններ էին և օրէնքը յարգող, հետեւաբար չմտաբերեցին դաւաճանել իրենց աւանդ յանձնուած Սահմանադրութեան զէմ եւ անոր ջնջումին ճամբան հարթել. ուստի եւ երբ իրենց պաշտօնավարութեան երկրորդ տարին լրացաւ իրենց ալ օրինաւորապէս պաշտօնէ քաշուելու պատրաստուեցան:

Եւ սակայն Ազգային ժողովը գումարելու մեծ արգելքը ծագեցաւ Նազըմ պէյի կողմէն. ոստիկանութեան նախարարը Դրան հետ իր մրցումին մէջ փորձ մը ըրաւ իր հսկողութեան ներքեւ աննել պատրիարքարանը. Ազգային ժողովին գումարումին խնդիրը առիթ մըն էր միջամտութեան, ուստի սուլթանին տեղեկագիր մը տալով իւ մացուց թէ Ազգային ժողովին գումարումը անկարգութիւններու եւ խռովութիւններու տեղի պիտի տայ, հետեւաբար արգիլումը պահանջեց: Նազըմի խօսքը սկսաւ քայիլ Դուռը շատ նեղացած էր, պատրիարքարանը կատրած: Արիկ Էֆէնտի սաարազամին քով երթալով ծանուց թէ ինք անձնապէս պատասխանատու է ո՛ր եւ է զէպքի համար. ամէն ապահովութիւն կուտար թէ ժողովը առանց անպատեհութեան մը պիտի կրնար իր աշխատութիւնները առաջ տանիլ: Միւս կողմէ Աշրգեան խորէն պատրիարք ալ իր կորովի վայրկեանները գտաւ, կտրուկ կերպով մը իմացուց սատրազամին որ եթէ Ազգային ժողովը գումարելու հրաման չտրուի ինք պատրիարքը անմիջապէս առանց ո՛ր եւ է բան մը ըսելու պիտի մեկնի եւ Արմաշ քաշուի: Արիկ Էֆէնտիի երաշխաւորութիւնը ու մանաւանդ պատրիարքին սպառնալիքը իրենց կէտադրեալ ազգեցութիւնը ունեցան, և Ազգային ժողովը գումարուեցաւ: Նազըմ պէյ շատ պըզտիկ մնացած էր: Ո՛ր էր թէ պատրիարքը միշտ յիշէր իր այս յաջողութեան գաղանիքը, որ ուրիշ բան չէր բայց եթէ կտրուկ լեզուով կորովալիք ընդդիմադրութիւն, իրաւունքի վրայ կրթնած. հակառակ մինչեւ այդ ստեղծ պատահածներուն տակաւին կարելի էր քիչ մը արիւթեամբ շատ չարիքի առաջը աննել եւ պատրիարքական իրաւասութեան սահմաններուն մէջ օգտակարապէս ծառայել ազգին. բայց դժբաղդաբար ժողովը իր վերակազմութեան մէջ սահմանափակ մտքի տէր պահպանողականներու մեծամասնութիւն մը ունենալով, նորէն պատրիարքին քով պիտի գնէր այնպիսի անձնաւորութիւններ որոնք իրենց շահամուտութեանը, տգիտութեանը մէջ աւելի ամրացած, թէ իրենք իրենք, թէ՛ պատրիարքը պիտի մղէին զէպի կտրուտ, եւ ահագին աղէտներ պիտի ծանրացնէին ազգին գլխուն:

Ազգային ժողովին բացումին հետ ազիտաբեր նոր թուական մըն ալ կը բացուէր, Նուրեան Յովհաննէս է.

Ֆէնտիի Ազգային ժողովին ատենապետութեան կոչուելովը: Ա՛լ չորս տարի էր որ աներեւութացած էր այդ տխուր անձը, եւ ահա Ազգային ժողովը զայն իրեն ատենապետ կ'ընտրէր. Տրթ. Թիրեաքեանի կը յաջորդէր Նուրեան, ինչ որ նշանակ լըն էր մտքերու տիրապետող ուղղութեան, եւ գուշակութիւն մը թէ նոր Քաղաքական ժողովը ինչ տեսակէտով պիտի ընտրուի:

Մագսուտ Սիմոն պէյ 1889ին պաշտօնապէս քաշուած էր առանց սակայն իրազործելու իր փառասիրական ձգտումներէն ոչ մէկը, ու հիմա ակնդէտ կը սպասէր վերստանձնել վարչապետութիւնը, որ շատ յուսալից խոստումներ կը պարունակէր այդ առերեւոյթ լքուի ժամանակամիջոցին: Արիկ էֆ. Ունճեան եւ իր բոլոր պաշտօնակիցները սաստկապէս հակառակ էին Սիմոն պէյի պաշտօնավարութեան եւ կ'ուզէին որ իրենց զազափարակից անձնաւորութիւններէ կազմուի նոր Քաղաքական ժողովը, եւ այսպէս թէ՛ պատրիարքը լաւ ձեռքերու մէջ կը մնար եւ թէ՛ հանրային գործերը: Ազգային ժողովն ալ, որքան որ պահպանողականներէ ու միջակներէ կազմուած էր մեծ մասամբ, բայց եւ այնպէս ամէն երեսփոխան Մագսուտի անունէն կը խրաչէր: Եւ ահա ժողովը բացուած պահուն, ընտրութեան ձեռնարկուելէ քիչ առաջ շշուկ մըն էր որ սկսաւ լսուիլ, «Սիմոն պէյ, Սիմոն պէյ», քուէները Սիմոն պէյին պէտք է տալ: Ապշուութիւնը մեծ եղաւ, վասն զի նոյն իսկ Գատը-զեղդիները որ Սիմոն պէյի ընտրութեան տարածուած կ'ընէին, զեռ նախորդ օրը ամենակատաղի հակա-Մագսուտեաններ էին, իրենց զուլունենալով Ունճեան Արիկ էֆէնտին: Փոփոխութիւնը մէկ գիշերուան մէջ առաջ եկած էր, հետեւեալ պարագաներով:

Սիմոն պէյ Մագսուտ ամիսներէ հետէ կը հետամտէր սահմանադրական յառաջիկայ շրջանին պաշտօնավարութեան, բայց տեսնելով որ անհնարին պիտի ըլլայ երեսփոխանութեան մէջ իրեն նպաստաւոր մեծամասնութիւն սը գտնել, զիմեց ուղղակի սատրազամին եւ անոր ձեռքով ուզեց ազդել երեսփոխանութեան վրայ. սատրազամը ժողովին գումարումէն օր մը առաջ հրաւիրելով Արիկ էֆէնտին փափաք յայտնեց որ Քաղաքական ժողովի տոննապետը Մագսուտ Սիմոն պէյը ընտրուի: Ինչ որ սատրազամին կողմէն «փափաք» էր բնականաբար քաղաքավարի ձեւով հրասան մըն էր, որուն չէր կրնար անհնազանդ գտնուիլ Արիկ էֆէնտի: Այդ հնազանդութիւնը պարտաւորիչ կը դառնար մանաւանդ այն պատճառով որ Ազգային ժողովին գումարումը ուղղակի սատրազամին միջնորդութեան շնորհիւն էր, հակառակ սոսիկանութեան նախարարին մեքենայութիւններուն: Արիկ էֆէնտի որ ժողովը կազմած էր իրեն «վստահութիւնը» զրուած անձերէ պիտի կրնար գործադրել եպարքսական հրահանգը. բայց եւ այնպէս մեծ դժուարութիւններու հանդիպեցաւ. սրտերը կ'ըմբոստանային. վերջապէս մեծ ճիգերով կարելի եղաւ Սիմոն պէյին տեղ մը տալ տասնըչորս ընտրուողներուն ցուցակին վարերը, 44 քուէով: Ինչ որ Սիմոն պէյին պէտք էր, ընտրուիլն էր, եւ ոչ ուրիշ բան:

Այսպէս ահա կը վերջացնէր իր պաշտօնավարութիւնը այն Քաղաքական ժողովը որ 1889 ին ընտրուած էր,

իր վրան այնքան մեծ յուսադրութիւններով, վասն զի կարեւոր գէպքերու թուականի մը բացաւիլը կը գացուէր: Ու արդարեւ հայկական ինքիւրը 1889ին առաւ թոխ մը որուն ոչ ոք կը սպասէր. եւ վարչութիւնը, որքան որ ալ վստահելի, որքան որ ալ բարի արամադրութիւններով լեցուն, բայց եւ այնպէս ոչնչացուց այն բոլոր պատեհութիւնները որոնցմով կարելի էր օգուտ քաղել Հայաստանի վիճակին մէջ գոնէ մինչեւ աստիճան մը բարելաւութիւն ներմուծելու համար: Քաղաքական ժողովականները սխալէ սխալ գլտորեցան, վասն զի ժամանակին ոգին ու ձգտումը չճանչցան: Ուրիշք որ ազգային վերաշինութեան գործին կոչուած էին, ամէն առիթ ձեռքէ փախցնելէ յետոյ մեծապէս նպաստեցին քանդուած գործին, վարչապետութիւնը յանձնելով Սիմոն պէյի:

ԱՐՓԻՍԲ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ՄԷԿ ՔԱՆԻ ԳԾԵՐ
ԿԼԱՏՍԴՈՆԻ ԿԵԱՔԷՆ

Անդիոյ բոլոր թերթերը լեցուն են կլատսդոնի կենսագրութեան ամէն մանրամասնութիւններով: Ինչպէս խմբագրականին մէջ ըսուած է, իր կեանքը պատմել՝ Անդիոյ ներկայ դարուն ամբողջ պատմութիւնը ընել պիտի ըլլար, ինչ որ «Նոր կեանք»ի շրջանակէն դուրս է: Կը շատանանք միայն մեր ընթերցողներուն ներկայացնելով հատուածներ զանազան թերթերէ, որոնք մարդուն, իր նկարագրին, իր կերպերուն վրայ զազափար մը կուտան:

* * *

Այս սերունդին մարդիկը, կ'ըսէ պահպանողական «Տէլլի թէլէկրաֆ», միաբերան զինքը կը դաւանին իբր ամէնէն մեծ խորհրդարանականը որ երբեք տեսնուած է: Լորտ Պիքընսֆիլտ այդ տիտղոսը Սըր Բոպերդ Բիլի կուտայ. բայց կլատսդոն Բիլի ամէն յատկութիւնները ունէր, եւ շատ ուրիշներ ալ աւելի: Մանրամասնութեանց ու գործի այնքան մեծ ու անսահման ծանօթութիւն մը ունէր որքան իր մեծ վարպետը. կրնար այնքան ճարտարութեամբ տիրապետել խորհրդարանին որքան ան. բայց, բացէն, այն կրտիկը, ճարտասանութիւնը եւ խանդը ունէր որ կը պակսէր Բիլի ցուրտ ճառերուն:

Երեսփոխանական ժողովին մէջ իր խօսքը անպատճառ կ'ազդէր: Նոյն իսկ եթէ իր դատը տկար էր ու պարտութիւնը ակնհայտ, միշտ կը յաջողէր ժողովը հմայել: Իր ամէնէն յաջող ու հիանալի ճառերէն մին արտասանեց 1885 յունիս 9ի գիշերը, իր անկումէն ճիշդ մէկ քանի վայրկեան առաջ: Եզիպտական վիճարանութեանց ատեն, երբ իր դահլիճը մազապուր ազատեցաւ պարտութենէ, իր ընդդիմադիրներուն պատասխան մը տուաւ որ ճարտասանութեան զուլի-գործոց մըն էր:

Իր յաջողութեան զազանիքներէն մին, առաջին վայրկեանէն ուր խօսեցաւ Երեսփոխանական ժողովին մէջ, իր ձայնն էր: Անոնք որ առաջին անգամ զինքը լսեցին՝ նոյն այն դրուատիքը տուին այդ հրաշալի գործիքին որպէս անոնք որ զինքը կը լսէին երբոր ձերունի մըն էր, իր համ-

բաւին գագաթնակէտը հասած: Էսպէս առնական ձայն մըն էր ատիկա: Էրիկմարդու ուժով ու հաստատակամ նկարագրի մը խորութիւնը կար անոր մէջ: Անոր դաշնաւորութիւնը ամէնէն ուշագրաւ կէտը չէր, հապա անոր խորունկ ուժը: Չայնին տեսակը այնպէս էր որ պէտք չի կար որ Կլատուզոն բազմութեան մը խօսէր՝ անհուն տպաւորութիւն մը առաջ բերելու համար: Նոյն իսկ մասնաւոր խօսակցութեան մէջ, խոր ու ազդական կը հնչէր ան: Երեսփոխանական ժողովին մէջ՝ երբեմն երբեմն ատենաբան մը կ'ընդմիջէր՝ մերթ շատ բարձր և շատ հեգնական «Լըսեցէ՛ք, լսեցէ՛ք» ու մը: Երբ առիւծի մը մանչիւնին պէս էր ատիկա — ոչ մէկ ազմուկ կրնար զայն խեղդել. ժողովին ամէն կողմը կը թափանցէր: Սխալ պիտի ըլլար ըսել թէ այդ ձայնը մարդիկը կը դողացնէր. ծերունիին մէջ շատ մարդկային ու շատ հանճարային բան մը կար՝ որպէս զի մարդոց վրայ առաջ բերէր նոյն ազդեցութիւնը զոր կ'ունենային, օրինակի համար, Բարնէյի ձայնին վայրագ ցրտութիւնը կամ ճոն Պրայթի հոյակապ ձայնին խտացեալ դանդաղութիւնը:

Անգլիական խորհրդարանական կատարեալ կերպ մը ունէր — որ է ըսել միշտ տեսակ մը ծանրութեամբ և անձնագոյնութեամբ կը խօսէր: Վայրկեաններ կային որ, սրբունեղութեան կամ գրգռումէ, կը սկսէր խօսիլ թէ՛ լեզուի եւ թէ՛ ձայնի տեսակ մը սուր խազով, ու երբ այսպէս կը խօսէր՝ նուազ կ'ազդէր: Բայց ատիկա վաղանցուկ էր. ու գրեթէ միշտ կը խօսէր այն ազատակ ու ողորկ հանդարտութեամբ որ ատենաբանական գերագոյն արուեստըն է անգլիական ժողովի մը մէջ: Սրբաբան ատենաբան մը չէր. իրերուն յորձանքովը ու կշիռովը շատ լեցուն մարդ մըն էր՝ որպէս զի հեգնական տեսութիւն մը ունենար մարդկային գործերուն վրայ: Բայց շատ ունէր այն յատկութեանէն զոր Անգլիոյ Երեսփոխանական ժողովին զուարթամտութիւնը կարելի է կոչել: Մէկ երկու բանով՝ կը զարնէր կը նետէր մարդ մը ու իր նկարագիրը. եւ Երեսփոխանական ժողովը, որ շատ կը սիրէ պզտիկ կտրիկ անձնականութիւնները, հրճուանքով կը լեցուէր: Ատենաբանութիւնը, որ առերեւոյթ մեծ հանգարտութեամբ կ'արտաբերուէր, մէկէն ի մէկ կը պոռթկար անանկ հարուածով մը որ կը փշրէր հակառակորդը, ու ա՛յ մեծ ծեղունիին կուսակիցներուն ուրախութիւնը շափ չունէր: Փաստ մը վերլուծելու եւ բզիկ բզիկ ընելու անհուն կարողութիւն ունէր, մինչեւ որ ա՛յ պատասխան արուելու ո եւ է հաւանականութիւն չէր երեւնար: Երբոր մանաւանդ հակառակորդը բազմաաբար տկար ատենաբան մըն էր, Կլատուզոն իր այս կարողութիւնը անգութ ծայրայեղութեան մը կը հասցնէր:

Վիճաբանութեան մէջ՝ քիչ մը շատ շարժում կը գործածէր, ու երբոր լաւ տրամադրուած էր ու իր ամբողջ ուժին տէր, բոլոր մարմինը իր ատենաբանութեան մէկ մասը կը դառնար: Երբոր այս վիճակին մէջ էր, սուղորութիւն ունէր զէմքը ծամածոնելու — ու զէմքին գծերը այնքան խորունկ էին որ տպաւորութիւնը շատ զուարճալի էր, ու ժողովը միշտ կը խնդար մեծ ծերունիին հետ: Էսպէս պարզ ու թափանցիկ բնութիւն մը ունէր, եւ այդպիսի

վայրկեաններու մէջ իր զէմքը անանկ գերբնականօրէն բանիմաց ու խորամանկ արտայայտութիւն մը կ'առնէր որ այլանպակ ու պաշտելի էր: Ինչ ինչ ձեւեր ունէր որ ընտանի էին ժողովին, և ամէն մարդ կը սպասէր ատոնց: Երբոր կատաղութեան մէջ էր, թեմոցները վար կը քաշէր: Իր ուրիշ մէկ ձեւն ալ էր երբ, ատենաբանութեան ինչ ինչ կէտերուն, աջ ձեռքին ցուցամատովը գանկին գագաթը կը բերթէր:

Ինչ սր զինքը խորապէս շահեկան կ'ընծայէր ժողովին մէջ, իր տարօրինակ դիւրագրգռութիւնն էր: Իրեն համար ըսուած է թէ խուլ մը իր զէմքին նայելուն կրնար հասկնալ թէ ժողովին մէջ ի՞նչ կ'անցնէր կը դառնար: Այդ զէմքը լճի մը պէս էր ապրիլի երկինքի մը տակ — արեւը ու ամպը, փոթորիկը ու փայլակը իր շարժուն ու թափանցիկ մակերեւոյթին վրայ ցոլացիկ: Երբոր բարկանար, բարկութիւնը անմիջապէս կ'երեւնար զէմքին վրայ, ու երբոր հաճոյք զգար՝ հաճոյքը կը ցոլանար նոյն արագութեամբ ու պայծառութեամբ: Ամենափոքր միջադէպը, ամենադոյզն ակնարկութիւնը վիճաբանութեանց մէջ, զինքը կը շահագրգռէին: Այսպէս, թիրախ մըն էր երիտասարդ եւ չճանչցուած ատենաբաններուն որոնք կը բաղձային հասարակութեան ուշադրութիւնը գրաւել՝ վիճաբանութեան մեծ վարպետին ուշադրութիւնը գրաւելով: Խայճը երբեք ապարդիւն չէր մնար. Կլատուզոն տեղէն կ'իջէր՝ ժողովին ամէնէն պզտիկ անդամին կողմէ եղած ամէնէն պզտիկ ակնարկութեան. ժողովին ամէնէն խոնարհ անդամն ալ կրնար զուարճացնել, բարկացնել զինքը կամ հաճելի ըլլալ իրեն:

Ինքն իսկ ըսած է թէ վիճաբանութիւն մը սկսած ատեն երբեմն պատահած է որ ջրոտ ըլլայ, ինքզինքին ո՛չ կատարելապէս տէր, բայց, պատասխանի մէջ, երբե՛ք: Ու իրաւ է որ իր ամէնէն կատարեալ ճառերը անոնք են որ արտասանած է վայրկեանին խթանին տակ, ո եւ է յարձակման մը պատասխանած ատեն: Նախադրութեան մէջ ստուգիւ մեծ էր. իր ճառին շէնքը կանոնաւոր, վճիռ եւ համոզիչ էր: Բայց, միեւնոյն ատեն, տեղ տեղ ճիգը կ'երեւնար. ու Կլատուզոն ա՛ն ատեն ամէնէն աւելի լաւ էր երբոր ճիգ չէր ընէր: Կարելի չէ ո եւ է նկարագրութեամբ մը գուղափար տալ թէ ի՞նչ անսահման հրապոյր կար այդ յանպատրաստից պատասխաններուն մէջ, մանաւանդ երբ լաւ տրամադրուած էր ու երբոր պատասխանը ուժով յարձակում մը չէր հապա մեղմ քննադատութիւն մը: Զուարթամտութիւն, լրջութիւն, կակուղ բայց ազդու քննադատութիւն, խրոխտ պիմանութիւն, ամէն բան կար այդ պզտիկ ճառերուն մէջ. ամենակարող երաժշտին պէս էր որ դաշնակութեանց ամբողջ շարքը կը գործածէ պարզ գործիքի մը սահմանին մէջ: Այսպիսի ճառերու մէջ էր նոյնպէս որ կարելի էր գնահատել իր ձայնին սքանչելիքը եւ անսահման կարողութիւնները: Արձագանգի մը հաւատարմութեամբ, խօսողին ու խօսքին ելեւէջներուն կը համաձայնէր ան: Կէս-ձայնի սխալ մը իսկ չի կար: Ամբողջութիւնը՝ կատարելապէս ներդաշնակ հրաշալի գործիքի մը պէս էր:

Իր ժամանակին ամենայեւեռ վայրկեանէն իսկ օգ-

տուելու որոշողութիւնը՝ նոյն իսկ ժողովին մէջ ցոյց կուտար, ուր բնաւ հանգիստ չէր առներ: Քուէարկութեան սենեկին մէջ շատ քիչ անգամ, չըսելու համար բնաւ, մարդու հետ կը խօսէր. սովորաբար՝ գրասեղանի մը առջեւ կ'անցնէր հապճեպով ու նամակ մը կ'աւարտէր: Ամէն գիշեր, ժողովին առաջնորդներուն սովորութեան համաձայն, նստին նկարագրութիւնը գրելու էր թագուհիին: Այս գործը կ'ընէր աթոռին վրայ նստած ատենը: Ծծուն թղթի գործիք մը կը դնէր ծունդին վրայ, եւ մերթ ընդ մերթ կը զարնէր գրածին վրայ: Յաճախ ոտքի ելած է պատասխանելու՝ ծծունը մէկ ձեռքը եւ գրիչը միւս ձեռքը: Քուէարկութեան սենեկին մէջ յաճախ կը շարունակէր ընդհատուած գործը: Մեծ վայրկեաններուն, կրակէ բնաւորութիւնը ամբողջովին կ'անհետանար, եւ ներքին անհուն ուժ մը ունէր ինքզինքին տէր մնալու: Եւ այսպիսի պարագաներու մէջ, ծծունը շատ օգտակար կ'ըլլար իրեն: Օրինակի համար, 1885 յունիս 9ի գիշերը երբ իր կառավարութիւնը պարտուեցաւ եւ մեծադարգ յուզման մը տեսարանը սկսաւ, այդ գիշերը, ընդդիմադիր կուսակցութեան յաղթական կրքի կատաղի յորձանքին մէջ, Կլատսոյն հանդարտօրէն կը շարունակէր իր տեղեկագիրը գրել թագուհիին. ու երբ իրեն հարցուցին, յաղթութեան գրեթէ անպատկառ ձայնով, թէ կառավարութիւնը ի՞նչ մտադիր էր ընել, ծծունը ձեռքը կը երբոր ոտքի ելաւ պատասխանելու:

Ընթրիքէն յետոյ գիշերուան նստին համար ժողով պարձած ատենն էր միայն որ հանգիստ կ'առնէր: Այդ միջոցին սովորութիւն ունէր կոնակը աթոռին տալու, աչքերը գոցելու՝ մրափելու պէս, եւ նոյն իսկ երբեմն այսպէս քիչ մըն ալ կը քնանար: Բայց վա՛յ ատենաբանին որ համարձակէր ենթադրելու թէ քնացող առիւծը չի լսեր կոր. իր մասին եղած ամենազոյզն ակնարկութեան՝ Կլատսոյն կազմ ու պատրաստ էր, ու խորունկ ձայնին թաւալումը կը լսուէր՝ հարցնելով իրեն վերադրուած խօսքին կամ գործին թուականը: Երբոր Կլատսոյն այդպէս կը հանգչէր կամ կը մրափէր, տարօրինակ ու երբեմն գրեթէ երկիւղ ազդող փոփոխութիւն մը կուզար կերպարանքին վրայ: Իր դէմքին սաստիկ տոգունութիւնը, տարիներու եւ աշխատութեան փորած ակօսները, սեւ աչքերուն եւ գիրաւշարժ դիմագծերուն ներոյժ կենդանութեան բացակայութիւնը — այս ամէնը անսահմանօրէն երկարաձգուող հանգիստի մը տպաւորութիւնը կուտային. ու երբեմն երբեմն Սըր Ուիլիըմ Հարքսօր կամ ուրիշ պաշտօնակից մը համակրական ու միանգամայն անձկալիւր նայուածքներ կը նետէին քովը՝ քնացող ու ըստ երեւութիւն անկենդան մարմնին վրայ: Յորչափ իր իրլանտական քաղաքականութեան պարտութիւնը եւ իր վերջնական հրաժարման վայրկեանը կը յատենար, իր վրայ կ'երեւնային նշաններ մտախոհ մեղամաղձութեան մը որ իր սովորական բնաւորութեան բոլորովին օտար էր: Գիշեր մը մանաւանդ, սրտաշարժ ու նշանակելի տեսարան մը պատահեցաւ քուէարկութեան սենեկին մէջ: Մէկ քանի գիշեր իրարու վրայ ստիպուած էր ժողովը մնալ շատ ուշ, ու իրլանտական Օրինագծին վիճաբանութիւններուն հետեւած էր՝ տարօրինակ ու անպստ ուշադրութեամբ: Անշուշտ աս էր պատճառը որ ա-

թոռին վրայ նստելուն պէս՝ քնացաւ: Երեսփոխաններ առջեւէն անցան գարձան՝ մասններին բերաննուն վրայ, ու ուսանք տարօրինակէս յուզուած էին:

Թէպէտ այսպէս Երեսփոխանական ժողովէն անբաժան, սակայն նստաորակին մէջ էր միայն որ իր դէմքը ընտանի էր: Ոչ միայն չէր ծխեր, այլ ծխախոտի հոտը իսկ կ'ատէր. ու երեկոյթներու մէջ, իր բարեկամները ծխողները կարելի եղածին չափ հեռու կը պահէին իրմէ, — հոգածութիւն մը որուն համար միշտ երախտագէտ կը մնար: Հետեւաբար, երբեք ոտք չէր դնէր ժողովին ծխարանը: Ուրիշ առանձնայատկութիւն մը ան էր որ բնաւ չէր ընթրիք խորհրդարանը: Գիշեր մը միայն, հրաժարականէն քիչ առաջ, մեծ իրարանցում մը պատահեցաւ ու շատ անգամներ հետաքրքրական ու գրեթէ պատմական բան մը տեսան. Կլատսոյն, վաթսուն տարուան անգամակցութեան յետոյ, առաջին անգամը ըլլալով խորհրդարանը կ'ընթրէր: Հոն ընթրել չուզելը հիմնուած էր սա առողջապահական նկատողութեան վրայ թէ ընթրիքէ առաջ պէտք է օդ փոխել, ու ասոր համար մինչեւ տունը կ'երթար:

* * *

1839 յուլիս 25 ին էր որ ամուսնացաւ օրիորդ Գաթէրին Կլինի հետ, «գեղանի օրիորդ Կլին» ին, ինչպէս կը ճանչցուէր ան ատեն, որուն սիրահարած էր Հուսէն նախորդ ձմեռը: Այս ամուսնութիւնը իր կեանքին երջանկութիւնը եղաւ: Կլատսոյնի անունը իր շուրջը ի՞նչ կազ ու կոխ ալ յարուցանէր, իր տանը խաղաղութիւնը, գեղեցկութիւնը եւ ուրախութիւնը խնդրէր զուրս էր: Իր կինը՝ կիններուն լաւագոյնն էր, ամէնէն սիրայեղցը, ամէնէն անձնուէրը, ամէնէն հոգատարը: Ամէն անգամ որ ամուսինը քիչ շատ երկար ատենաբանութիւն մը ունենար ընելիք ժողովին մէջ, Տիկին Կլատսոյն անխախտ իր տեղն էր տիկնանց բաժնին անկիւնի աթոռին վրայ, — աթոռ մը որ ալ եկաւ ատեն մը որ իրեն հետ նոյնացած էր գրեթէ, այնքան բնական դարձած էր անոր եւ իր միջեւ ընկերակցութիւնը: Հոն կը նստէր ատենաբանութեան ամբողջ տեսչութեանը, ուշադիր իւրաքաչիւր բառին եւ իւրաքանչիւր վանկին — ի՞նչ որ ալ ըլլար կուսակցութեանց կամ անհատներու կողմէ իր ամուսնին եղած ընդունելութիւնը, միշտ կեղծանցած մէկ մտածման մէջ, թէ իր ամուսինը իրաւացի էր, ու պէտք էր որ յաղթէր: Ինք իր ձեռքովը կը պատրաստէր, այնպիսի խնամքով մը որ կարծես կեանքի ցեղին ըլլար ան, շէրքի եւ հակիթի խառնուրդը զոր Կլատսոյն միշտ հետը կը բերէր ամէն անգամ որ քիչ շատ երկար ատենաբանութիւն մը ունենար ընելիք, — գեղին շիշ մը որուն ծաւալը փոփոխական էր արտասանելիք բանախօսութեանը երկարութեանը համաձայն, եւ որ տարիներու ընթացքին մէջ ժողովին ընտանի առարկաներէն մին դարձած էր ալ: Մէկ կամ երկու անգամ այդ գաղտնախորհուրդ քաղաքութեանէն՝ կը բաւէր Կլատսոյնը մինչեւ իր ամէնէն երկայն ճառին ծայրը հասցնելու, — ասով հակապատկեր մը ընծայելով Պիզմարք իշխանին մէթոսին, որուն, երբ իր վերջին ատենաբանութիւնը ըրաւ

Բայնսպակին մէջ, իր որդին եւ քարտուղարը հինգ վայրկեանը անգամ մը բռնեաք եւ շուր կը հասցնէին :

Նոյնպէս իր ընտրական ամէն մեծ պայքարներուն մէջ, ինչ որ ըլլար հեռաւորութիւնը, օղբ ո՛րչափ ալ գէշ ըլլար, միգինկները ո՛րչափ ալ բազմաթիւ, սիկին կլատարսդն միշտ էրկանը քսիւ էր, անսր վրայ հսկելով այն հոգածութեամբը եւ ուշադրութեամբը զոր հիւանդապահ մը կը նուիրէ խօսք մտիկ չընող հիւանդի մը, ու երբեմն երբեմն խանդավառ սնկնդիրներուն որոտագին ծափահարութեանց ու ցնծութեան ցոյցերուն առաջ բերած մէկ դապարէն կ'օգտուէր՝ կլատսդնի ախառնի ի վար մէկ քանի խօսք փսփսալու սր շատ չգրգռուի :

* *

Առտուն կանուխ ելող մըն էր կլատսդն : Եօթը ժամ քուն կը շնորհէր ինքզինքին : Անկեղծօրէն կը խոստովանէր թէ կը սիրէր ա՛լ աւելի քնանալ, ու կանուխ չելլել, մանաւանդ ամէն առտու, բայց երբեք չէր շեղեր իր կանոնէն : Իր քնանալու կարողութիւնը աներկբայ իր յաջողութեան պաշտնիքներէն մէկն էր, եւ այդ կարողութեան կորուստն էր սր վերջերը խորտակեց իր հիւանդի կենսականութիւնը : Ամբողջ կեանքին մէջ, խորունկ քնացող մը եղած էր : Նաբալէն Պոնաբարդին պէս՝ ուզած ատենը քնանալու աուրքը ունէր, ու, աչքը բանալուն պէս, իր ամբողջ կարողութեանց կատարելապէս տէր ըլլալու ձիրքը : Կարող էր աթոռի մը վրայ նստիլ, երեսը թաշկինակով մը ծածկել, ու երեսուն երկվայրկեանէն քնանալ, ու արթննալուն՝ միտքը այնքան փայլուն էր սրբան ու եւ է ատեն : Այն « բարակ ու ամպոյն մարդերէն չէր, ինչպէս կ'ըսէ կեսար, սրունք զիշերը չէն քնանար, եւ սրունք շատ կը մտածեն : »

Ատեն մը այնքան նշանաւոր էր իր մարմնական սրբան մտաւորական կարողութիւններովը : Նշանաւոր ձի-հեծող մըն էր, օրը յիսուն մղոն կրնար քալել, ու ճարտար փայտահար մըն էր : Միշտ շատ հոգածու էր իր առողջութեանը : Կը պատմեն թէ կանոն էր բրած իւրաքանչիւր պատառ 33 անգամ՝ ծամել՝ կլլելէ առաջ. սա իրաւ է սր սքանչելի մարտողութիւն մը ունէր, եւ շատ քիչ անգամ հիւանդ եղած է : Ասիկա արդիւնք էր այնքան իր մարզանքներուն, որքան իր բժշկին պատուէրներուն աղու մը հլուութեամբ հետեւելուն : Երբ Սըր Անտրիու Գլարք իրեն ըսէր որ անկողին պէտք է մտնէ, անմիջապէս կը մտնէր. երբոր ըսէր թէ այս ինչ բանը ուտելու չէ, անմիջապէս սեղանէն կ'անհետանար ան : Բայց չկարծուի թէ կլատսդն ճշմարտի կեանք մը կ'անցընէր : Լաւ ուտել-խմելը կը սիրէր, ու չէր սրբանար ասիկա : Ծաշին գարեջուր կը խմէր, ու ընթրիքին գինի, մէկ կամ երկու գաւաթ պորտօ, գաւաթ մը շամբանիա, եւ կերակուրէն յետոյ միշտ՝ մէկ կամ երկու գաւաթ բարդօ : Բարդոն շատ կը սիրէր, ու անգամ մը ըսաւ բարեկամի մը թէ միաքը այնքան կը բանար ան որ չի պիտի ուզէր սննեակի մը մէջ միս մինակ գտնուիլ շիշ մը լաւ բորոյցի հետ, որովհետեւ կը զգար թէ ամբողջ շիշը պիտի պարպէր :

Լոնտոն եղած ատենը, յաճախ ընթրիքի կ'երթար : Ընկերութեան մէջ շատ կը փնտռուէր, ու ինքն ալ կ'ախորժէր ընկերութենէն : Հրաշալի խօսող մըն էր : Ամէն


բան ու անյուզ կարգացող մը ըլլալով, ամէն կարգացածը միաքը պահելու կարողութեամբ մը, մարդիկը կը զարմացնէր իր հմտութեան տիեզերականութեամբը ու ճշութեամբը : Կը պատմուի սր իր բարեկամներէն մէկ քանին խօսք-մէկ ըրին ա՛նգամ մը շատ մտնադիտական նիւթի մը վրայ խօսելու, յուսալով սր Յլատսդնը յանկարծակիի պիտի բերեն. ուստի հանգէսի մը մէջ կարգացին ու լաւ մը միտունին պահեցին շինական գործարաններուն մասին յօգուած մը կլատսդն անոնց մտիկ ըրաւ աճեցուն հետաքրքրութեամբ մը, ու էն վերջը զիտելչալուսաւ սր աներկբա կարգացած էին յօգուած մը զոր ճիշդ այդ նիւթին վրայ գրած էր ինք տարինէր առաջ :

Ամերիկացի թղթակից մը կը պատմէթէ անգամ մը սեղանի մը վրայ կլատսդն յաջորդաբար խօսեցաւ սա նիւթերուն վրայ, — Տը. Բէզրիի վերջին պեղումները Եզիպտոսի մէջ, բաբելական ու եգիպտական ընտանեկան կեանքը, Տոտէի « Սաֆօ »-ն եւ Ֆրանսական իրապաշտ գրականութիւնը, նորվեկեան ձկնորսութեան կերպերը, զուգակշիռ մը Սարա Պէրնարի եւ Մարի Անաէրստի միջեւ, մանրամասն Նորտ Պրուսի, Թալիոնիի, Չարլզ Տիքէնսի, Լուի-Ֆիլիպի, Թոմ Սէյքրսի, Կարիպալտի կեանքէն, յունական զգեստները, շուներու ցոկակապերը, շինական յախճապակին, Օմալի դքսին հաւաքածոյները եւ Շանդիյեիի պալաւը, Տիկին տը Սէլինէէ կային :

* *

Իր լայն սփոյն պէմքը տեսնողները՝ կարելի չէր սր չընկճուէին իրմէ բղխող արտասովոր ուժէն : Կլատսդն հրաշալիք մըն էր իր իւրաքանչիւր կարողութեամբը, — իր մտաւորական անսահման ուժովը, իր անընկճելի արութեամբը, իր անյուզ կարողովը, իր փիզիքական յորձեռանդն գործունէութեամբը, իր քաղաքական կրքերուն ամենութեամբը ու կրակովը, իր առաջադրութեանց յաճառութեամբը ու մրրեկովը : Աւելի՛ մարմնաւորեալ փոթորիկ մըն էր ան, իր վարուն մէջէն մրրկալի, անպիմազրելի, անխնայ խոյացող, քան մարդկային արարած մը :

ՀԱՍՏԵՆՆԻ ԲԱՃՆԵՎԻՆ



ՆՈՐ ԿԵԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՆԱՄԱԿ ՈՒ ԲԱԺՆԵՎԻՆ ՂՐԿԵԼ ԱՌ

L. FRANK,
309, LADBROKE GROVE,
(ENGLAND). LONDON, W.

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ կը հրատարակուի ամսու 1ին եւ 15ին : Բաժնեդիրն է Եւրոպայի համար տարեկան 10 և վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար՝ տարեկան 2 ու վեցամսեայ 1 տոլար :